



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



529

4.2.

182



Ա. Հ.

182

Արքային Պարզութեան Գրադարանից

Հ. Շահում

Ա. Շ Խ Ա. Ր Հ Ա. Բ Ա. Ր Ի

~~~~~

1893

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ձ

(ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ)

ԿՈԶՄԵՑ Ն. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

Ա. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Շ Ո Ւ Շ Ի

Տպագրութեան Ա. Մակարեան-Յանձնվեանց. 1893:

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ա. ՎԱՆԱՑ

Օ

ՆՈՐ—ԶՈՒՂԱ.

1 9 0 0

Ա. Խ ՅՈՎԱՆՆԻՔՍԵԱՆ

1 9 6 0

ՆՈՐ—ԶՈՒՂԱ.

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԺԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

43403

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2010

90116-42

182-2812  
N 182


(238-2000)

|  |                                         |
|--|-----------------------------------------|
|  | ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ԳՐԱԴԱՐԱՆ |
|--|-----------------------------------------|

(287-2000)  
(36-97)

## ՀՐԱՄԱՆԱԿ

Բ. ՄՐԲԱԶԱՆ Տ. ՄԱՂԱՔԻԱ. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԵՐՈՒՆԵԱՆ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋ-  
ՆՈՐԴԻ ԹԵՄԻՍ ՀԱՅՈՅ ՊԱՐՍԿ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ :



Բ Բ 2002



ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ - ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Մ Ի Գ Ա Ն Ի Խ Օ Ս Ք

Որովհետև այժմեան աշխարհաբար քերականութիւնները չեն կարողանում իրրի ձեռարկ ծառայել աշակերտների ձեռքում աշխարհաբար լեզուն լաւ սովորելու համար, ուստի անհրաժեշտ պէտք է զգացւում մի այնպիսի ձեռնարկ ունենալ, որով՝ աշխարհաբարում գործածուած գլխաւոր ձեռը, կանոնները դիւրութեամբ կարելի լինի աւանդել աշակերտներին և սովորեցնել :

Աշխարհաբարը զարգացման աստիճանի վերայ գտնուելով, նորանոր մշակած ձեեր, ժամանակներ մոցնելով իւր մէջ, իրրե կանոն ընդունւում են, այն ինչ անցեալներում կազմուած քերականութիւնների մէջ չկան այդ ձեռը :

Օր. այժմ գործածուող Պալասանեանի աշխարհաբար քերականութեան մէջ բայերի չառ ժամանակներ չկան կամ երկրորդական տևող են բռնում, լծորդութիւնները փոխուած են ել : Այս և մի քանի այլ կէտեր ի նկատի ունենալով սուղ ժամանակում կազմում ենք հետեւեալ դասագիրքը, որի Ա—մասը՝ ստուգաբանութիւնը ա, դասարանի (դ—բաժանմունքի) դասընթաց է, Բ—մասը՝ համաձայնութիւնը բ—դասարանի (ե—բաժանմունքի) դասընթաց է :

Ուսուցիչը կարող է Գ—բաժանմունքի համար օգտուել դասագրքից, բայց ոչ աշակերտներին տալ : Հետաքրքիրների և թեմական դպրանոցների գ—դասարանի աշակերտների համար հարկաւոր է լինում համեմատել Տաճկահայոց և Ռուսահայոց աշխարհաբարը, իրրե համեմատութեան գլխաւոր կէտեր, նմուշներ Յաւելուածում առաջ է բերուած Տաճկահայոց հոլովների և խոնարհումների ձեռը : Ձեռնարկս կազմելիս ի նկատի առնուած է գլխաւորակս Այտինեանի քերականութիւնը և Հայոց ու Ռուսաց գործածուող ձեռնարկները :

Ն. Մելիք-Թանգ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

- Քերականութիւնը մի արուեստ է, ուսմունք է, որ սովորեցնում է մի լեզուով կանոնաւոր խօսելու ուղիղ գրելու և կարդալու կանոնները :
- Հայոց լեզուն ունի երկու քերականութիւն, գրաբարի և աշխարհաբարի :
- Աշխարհաբարի քերականութիւնը մեզ սովորեցնում է աշխարհիկ լեզուով կանոնաւոր խօսել և ուղիղ կարդալու գրելու կանոնները : Սա բաժանում է երկուսի, Տաճկահայոց և Ուռսահայոց բարբառների քերականութեան, որոնք որոշ մասերում տարբերում են միմեանցից :
- Աշխարհաբարի քերականութիւնը բաժանում է երկու գլխաւոր մասի. Ստուգաբանութեան և Համաձայնութեան :
- Ստուգաբանութիւնը քերականութեան այն մասն է, որ պարապում է նախագասութիւնների և սորա բառերի կազմութեան կանոններով, նշանակութեամբ, նոցա զանազան մասերի բաժանմամբ և դասաւորութեամբ :
- Համաձայնութիւնը քերականութեան այն մասն է, որ պարապում է նախագասութիւնների, բառերի կապակցութեան կանոններով, միմեանց հետ ունեցած և ունենալիք յարաբերութեամբ և Համաձայնութեամբ :

Ա.) ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆԵՐ

- Եթէ արտասանենք մի քանի բառեր առանց միմեանց հետ համաձայնեցնելու, այն ժամանակ մի միտք՝ մի խօսք չենք հասկանալ, միայն բառեր կը լսենք : Օր. տուն, շուն, գնաց : Այս երեք բառերը ջոկ ջոկ արտասանած մի միտք չեն արտայալտում :
- Եթէ նոյն բառերն անկապ չժողնենք, միմեանց հետ համաձայնեցնենք, այն ժամանակ մի միտք կը հասկանանք, կիմանանք ի՞նչի համար է խօսում : Օր. շունը գնաց տուն : Այս երեք բառերը մի միտք են արտայալտում, իմանում ենք որ շան համար ասում է թէ գնաց տուն :
- Ալդիսի մի քանի բառերով արտայտուած միտքը կոչւում է նախագասութիւն, շունը գնաց տուն մի նախագասութիւն է. (ով կասի մի նախագասութիւն. դու դու ել) :
- Եթէ մի քանի նախագասութիւններ միմեանց ետևից ասենք և գրենք առանց ձայնի և զրի միջոցով բաժանելու, այն ժամանակ մտքերը կը շփոթենք, չենք իմամալ ում մասին ի՞նչ ասուեց : Օր. շունը գնաց տուն հայ ուտելու էնք էնք : Այստեղ պարզ չէ միտքը, չենք իմանում, շունը դնաց տուն հայ ուտելու, թէ մենք եկել ենք հայ ուտելու : Բայց եթէ ասենք և գրենք,

շահնը գնուց պատճ. հայ ուստեւու էնք էլել մենք. միտքը կալարզուի. կհասկանանք  
ի՞նչ է ասում. (բացադրի՞ր ուրիշ օրինակներով) :

5. Այն նշանները, որոնք դրւում են նախադասութիւնների, բառերի մէջեր-  
քում, որպէս զի մտքերը պարզ հասկացուեն—կոչում են կէտեր : Կէտերը  
սոքա են. վէրջանէտք (:) , մէջանէտք (.) , սորունէտք (,) , բուլ (՝) , սոլունը (կ') ,  
ժանէտք ('ի) , չանէտք («») :
6. Այն նշանները, որոնք դրւում են բառերի վերայ արտասանութիւնը ճիշդ  
անելու և խօսքն ըմբռնելու համար, կոչում են նշաններ, հրամայական նշան  
(՝), հարցանշան նշան (°) շարհացանշան նշան (Շ) : Օր. գոռո՛ : Ո՞ւր ես գնում : Ի՞նչ  
գելցեցի այդի է : (բեր ուրիշ օրինակ և տարբերութիւնը որոշիր) :

ա). ԵնթԱԿՍՅ, ՍՏՈՐՈԴԵՍԼ, ԼՐԱՑՈՒՑԻՉ

7. Իւրաքանչիւր նախադասութեան մէջ մի բանի վերայ պիտի խօսուի, ապա  
թէ ոչ միտք չի դուրս գալ : Օր. շահնը գնուց պատճ. այստեղ խօսում է շան  
վերայ, նախադասութեան նիւթը, առարկան՝ շունն է. ով գնաց—շուննը :  
(Ո՞վ կասի մի նախադասութիւն. ում վերալ է խօսում. նիւթը ո՞րն է. ի՞նչ  
է ասում) :
8. Երբ որ իմացանք նախադասութեան մէջ ում վերայ են խօսում, այն ժա-  
մանակ պիտի իմանաք առարկալի վերայ ի՞նչ են ասում. եթէ ոչ, միայն  
առարկան իմանալով նախադասութեան միտքը չենք համգանալ : Օր. եթէ  
գրած լինէր շահնը պատճ, միտք չէր դուրս գալ. չէինք իմանալ շունը ինչ  
արաւ, իսկ եթէ ասենք, շահնը գնուց պատճ, միտք դուրս կըգայ. գնուց  
է տալիս շան արածը, գործածը. իմանում ենք՝ որ շան (առարկալի) հա-  
մար ասում են թէ գնուց. շահնը ի՞նչ արաւ—գնուց. (ուրիշ օրինակ ով կասի) :
9. Նախադասութեան մէջ այն առարկան, գործող անձը, որի վերայ որ խօս-  
ւում է, կոչում է Ենթակայ : Ի՞նչ էլ որ խօսւում ասւում է Ենթակայի  
մասին, այն կոչում է Ստորոգեալ : Շահնը գնուց պատճ. շահնը Ենթակայ է.  
Գնուց ստորոգեալ : (ով կասի մէկ նախադասութիւն. ո՞րն է Ենթական. ո՞րն  
է ստորոգեալ) :
10. Կարող ենք ասել այնպիսի նախադասութիւն, որի մէջ ստորոգեալ կայ,  
բայց Ենթակայ չկայ. նախադասութիւնն էլ միտք է արտայատում . Օր.  
անշնուամ է՝ որորում է, ասում են. սրանք Ենթակայ ունեն, որովհետեւ դրանք  
Ենթակայի արածն են, Ենթակայի գործածն են. բայց ովքեր են, չգիտենք :  
Իսկ եթէ ասենք Թո՞րոս—գնում ես գնու այստեղ էլ Ենթակայ չկայ, բայց  
գիտենք որ քեզ (դու) է ասում, Ենթական դու՝ Թորոսն ես. դո՞ւ, Թո՞րոս,  
գնում ես գնա՞ :

11. Այն նախադասութիւնը, որի մէջ ենթակալ կալ կամ մտքով իմանում ենք ով է, կոչում է դիմաւոր : Օր. Կիրակոսը գնաց. Թո՛րոս, գնում է գնում : Այն նախադասութիւնը, որի մէջ ենթակալ չկալ, չենք իմանում ով է ենթական, կոչում է անդէմ : Օր. Որոտում է, անշրջեառում է ևլ. որոտում է, անշրջեառում է — ստորոգեալներ են, իսկ ենթականերն անլալտ են : (Ո՞վ կասի մի դէմ. մի անդէմ նախադասութիւն ո՞րն է ենթական . . . ) :
12. Նախադասութեան մէջ ենթակալ՝ ստորոգեալ որ լինի, մի միտք կհասկացուի, բայց մի լրացած միտք չի արտայալտուիլ : Օր. շրանը գնաց, ես գրեցի. սրանց մէջ միտք կալ, բայց լրացած չէ. շրանը ուր գնաց, ես ինչ գրեցի — լայտնի չէ, եթէ ասեմ շրանը գնաց պահ, ես ի՞րաց հաց, ես գրեցի պասա. այն ժամանակ միտքը կըլրացնի : (Ո՞վ կասի մի . . . ով կըլրացնի միտքը) :
13. Նախադասութեան մէջ այն բառերը, որոնք ենթակալի գործողութեան միտքը լրացնում են, կոչում են լրացուցիչներ. դասու, հաց, պահ, լրացուցիչներ են : (Ո՞վ կասի մի նախադասութիւն որ մի լրացուցիչ ունենալ, երկու ևլ) :

բ) ՊԱՐԶ և ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

14. Կարող ենք ասել մի նախադասութիւն, որ մի միտք արտայալտի. և կարող ենք ասել մի նախադասութիւն, որ երկու կամ աւելի միտք արտայալտի : Օր. շրանը գնաց պահ. սա մի նախադասութիւն է մի մտքով : Շրանը գնաց պահ, որպէս զի ժաղաց յագեցնի, մի նախադասութիւն է երկու մտքով : Շրանը, որ գընաց պահ, որպէս զի ժաղաց յագեցնի, ի՞նչ ժամկ յետոյ դարձու մի նախադասութիւն է երեք մտքով :
15. Մի միտք արտայալտող մի նախադասութիւնը կոչում է պարզ : Երկու և աւելի միտք արտայալտող մի նախադասութիւնը կոչում է բաղադրեալ : Ես գնացի պահ, պարզ նախադասութիւն է : Ես գնացի պահ, որպէս զի հաց ուղեմքը բաղադրեալ նախադասութիւն է : (Ո՞վ կասի մի պարզ, բաղադրեալ նախադասութիւն) :
16. Կարող է լինել այնպիսի պարզ նախադասութիւն, որ կազմուած լինի միայն ենթակալից և ստորոգեալից : Օր. շրանը գնաց, Սուեփանն էշու : Կարող է լինել այնպիսի պարզ նախադասութիւն, որ կազմուած լինի ենթակալից, ստորոգեալից և լրացուցիչներից : Օր. շրանը գնաց պահ մի ուղեմքը : Սուեփանը էշու հոգ :
17. Ոյն պարզ նախադասութիւնը, որ բաղկացած է ենթակալից և ստորոգեալից, կոչում է համառօտ : Այն պարզ նախադասութիւնը, որ բաղկացած է ենթակալից, ստորոգեալից և լրացուցիչներից, կոչում է ընդարձակ : Սուեփանը էշու մող — ընդարձակ նախադասութիւն է : Սուեփանը էշու մող — ընդարձակ նախադասութիւն է :

- խաղասութիւն է։ (Ո՞վ կասի մի համառօտ, մի ընդարձակ նախադասութիւն)։
18. Բաղադրեալ նախադասութիւններից մէկը լինում է գլխաւոր միտքը պարունակող, անկախ, իսկ միւսները դրանից կախում ունեցող։ Օր. Սարգիս Գնաց պատճան, որպէս զետչյալ յագեցնի, ալստեղ խօսում է Սարգսի վերայ և նորա համար ասում է գնաց տուն։ գլխաւոր միտք պարունակողն էլ դա է։ իսկ թէ ինչու համար գնաց, դա երկրորդական հարց է և առաջինի պատճառն է ցոյց տալիս։
19. Բաղադրեալ նախադասութեան մէջ անկախ և գլխաւոր միտք պարունակողը կոչւում է Գլխաւոր նախադասութիւն, իսկ մնացած նախադասութիւններն որոնք գլխաւորի զանազան կողմերը — հանգամանքներն են ցոյց տալիս, պարզաբանում, կոչւում են Երկրորդական։ Սարգիս Գնաց պատճան, որպէս զետչյալ, առաջինը — գլխաւորն է, երկրորդը — երկրորդական նախադասութիւն է։ (Ո՞վ կասի մի բաղադրեալ նախադասութիւն, ո՞ն է երկրորդականը, և ո՞րն գլխաւորը։
- Պ). ՄԻԱԽՈՐԵԱԼ, ՄԻԶԱՆԿԵԱԼ և ՅԱԽԵԼԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ  
Պ).
20. Կարող ենք ասել մի քանի պարզ նախադասութիւններ. որոնք մի ենթակայ ունենան. կամ մի քանի պարզ նախադասութիւններ, միենոյն ստորոգեալով։ Օր. Պետրոսը Գնաց պատճան. Պետրոսը հաց իւրաւ. Պետրոսը հնեց։ Պետրոսը Գնաց պատճան, Գեղենոց Գնաց պատճան։ Շունը իւրաւ հաց. շրանը իւրաւ պանիր, շրանը իւրաւ մի։
21. Կարող ենք միենոյն ենթակալ ունեցողներին միացնել։ Օր. Պետրոսը Գնաց պատճան, հաց իւրաւ, հնեց։ Նոյնպէս միենոյն ստորոգեալ ունեցողներին միացնել։ Օր. Պետրոսը, Գեղենոց Գնացին պատճան։ Շունը իւրաւ պանիր, հաց, մի։
22. Այն նախադասութիւնները, որոնք կազմւում են մի քանի պարզ նախադասութիւնների միաւորուելուց, ստորոգեալի կամ ենթակալի միջոցով, կոչւում են Միաւորեալ։ Պետրոսը Գնաց պատճան, հաց իւրաւ, հնեց — միաւորեալ է։
23. Կարող ենք ասել այնպիսի նախադասութիւն, որը կապ չունենալ մեր ասած միւս նախադասութիւնների հետ։ Օր. Էնչուկո Վերահայուան տասաց, դու չար ես։ Այստեղ խօսքը նորա վերայ է, թէ դու չար ես, իսկ ով է ասել, ով չէ ասել, այդ քիչ կապ ունի նորա հետ։ Վահանը շատ քաջ էր, Էնչուկո պատմում էն, նա վեհանձն էր։ Այստեղ խօսքը նորա վերայ է, թէ նա շատ քաջ էր, վեհանձն էր. թէ ովքեր են պատմում այդ կապ չունի նորա հետ։
24. Այն նախադասութիւնները, որոնք թեթև պարզաբանութեան համար նախադասութիւնների մէջ են ընկնում, առանց նոցա հետ կապւելու, որոնց դուրս էլ ձգենք նախադասութեան միտքը չի փոխւիլ, կոչւում են միջանկեալ, Էնչուկո Վերահայուան տասաց և պատմում են, կըլինեն միջանկեալ։
25. Մի որ և է բան պատմելիս, եթէ այնպիսի նախադասութիւններ ենք ասում,

որ պատմողի—գործող անձի իսկական խօսքեր են արտայալտում, այն ժամանակ ստանում ենք Յաւելեալ նախադասութիւններ. որոնք նախադասութիւններից եթէ դուրս ձգենք, միտքը կրփոխուի : Օր. Յովհաննէսը տասց, «բու՞նչ ճռ ճռ գոյլ»: Երկրորդը՝ է Յաւելեալ : (Ո՞վ կասի մի միջանկեալ, մի Յաւելեալ նախադասութիւն) :

26. Յաւելեալ նախադասութիւնը դրւում է չակերտների մէջ : Վերջակէտից լետոյ և նոր գրելիս նախադասութեան սկզբի տառը գլխատառ պիտի գրել : Երկրորդականը՝ գլխաւոր նախադասութիւններից ստորակէտով է բաժանւում : Նախադասութիւնը վերջանալիս վերջակէտ պիտի գնել : Նա ասաց «առ է՞ գուռմ»: Այս հար է : Քարոզ, ո՞վ լոյցը ընդուա :
27. Միջանկեալ նախադասութիւնները դրւում են ստորակէտների մէջ, եթէ նախադասութեան մէջ են, իսկ եթէ սկզբում են դրւած, ստորակէտը դըրւում է վերջին : Օր. ինչո՞ւ ասում է՞ վատ է և ցածահոգի, կամ վատ է, ինչո՞ւ ասում է՞ ն, և ցածահոգի : Վահանը քաջ է, ինչո՞ւ ասում է՞ ն, նա վեհանձն է :
28. Այսպիսով բոլոր նախադասութիւնները կազմութեան նայելով բաժանւում են հինգ մասի

Պարզ — { ընթարչան  
համառաօդ

Բաղադրեալ — { Գլուխուր  
եւ իրորդականներ

Միջանկեալ

Միաւորեալ

Յաւելեալ

դ) Պ.Ս.Մ.Պ.Ա.Կ.Ա.Ն, Հ.Ս.Բ.Զ.Ա.Կ.Ա.Ն, Պ.Ս.Ս.Ս.Խ.Ա.Կ.Ա.Ն, Հ.Ր.Մ.Ա.Կ.Ա.Ն,  
Հ.Ո.Բ.Մ.Ա.Կ.Ա.Ն եկ ԿՈՉԱԿԱ.Ն Ն.Ս.Խ.Դ.Ս.ՍՈՒԹԻՒՆՆԵՐ

29. Կարող ենք մեր իմացած հինգ նախադասութիւնները գանազան ձերով արտայալտել : Օր. իրի՛ր գնա՛ առան. գնացի՛ր առան. այս՛, գնացի առան. կ'աչ գեշցի՛ առան : Երբեմ Ս.սպուտն առեղծեց Ս.դանին, այս. . . . : Տէ՛ր Ս.սպուտն, ֆրէ՛լ մէջ : Ս.ուազին նախադասութիւնը հրաման է արտայալտում. Երկրորդը հարցմունք է անում. Երրորդը պատասխան է տալիս, չորրորդը զարմացած բացագանչում է. հինգերորդը պատմում է. վեցերորդը—կանչում, դիմում է Ս.ստուծուն :
30. Այն նախադասութիւնը, որի մէջ գործողութիւնը հրամանի ձեռով է արտայալտուած, կոչւում է Հրամայական, իրի՛ր գնա՛ առան. Հրաման ցուցնող բառի վերայ դրւում է շեշտ. իրի՛ր գնա՛ առան—Հրամայական նախադասութիւն է :
31. Այն նախադասութիւնը, որի մէջ գործողութիւնը հարցումով է արտայալտ-

- լում, կոչում է Հարցական. Հարց ցուցնող բառի վերայ դրւում է Հարցական նշան (պարովկ). ո՞ւր ես գնահատ. սա Հարցական նախադասութիւն է :
32. Այն նախադասութիւնը, ուր գործողութիւնը պատասխանի ձևով է դրւած, կոչում է Պատասխանական : Օր. այս', ես նորո՞ո ա՞սոյ :
33. Այն նախադասութիւնը, ուր գործողութիւնը բացազանչութեամբ է յայտնը-լում, կոչում է Զարմացական կամ Բացագանչական : Բացագանչութիւն ցուցնող բառի վերայ դրւում է զարմացական նշան : Ի՞նչ հիանալի դժուք ես : Սա բացազանչական նախադասութիւն է :
34. Այն նախադասութիւնը, ուր գործողութիւնը պատմելու զրոյցի ձևով է արտայատւած, կոչում է Պատմողական : Օր. նովո նորո՞ո պատարանում իսօսում էին պանազան բաներ, տառամ էին լեռ . . . . սա պատմողական նախադասութիւն է :
35. Այն նախադասութիւնը, ուր գործողութիւնը կատարւում է կանչելու ձևով, մէկին դիմումով, կոչում է կոչական : Ում դիմում է, այն կոչում է կոչական բառ, որի վերայ դրւում է շեշտ : Տէ՛ր ֆրնիր մէշ : Սա կոչական նախադասութիւն է. Տէ՛ր կոչական բառ է :
36. Եթէ նախադասութեան մէջ ստորոգեալլ բացասում է, այն ժամանակ ստանում ենք Բացասական նախադասութիւն : Եթէ ստորոգեալլ չի բացասում, ստանում ենք Հաստատական նախադասութիւն : Ես չէմ գրում. ես գնացյ ո՛չ : Ես գրում եմ, ես գնացյ : Առաջի երկուուր բացասական են. երկրորդ երկուուր հաստատական : (Ո՞վ կասի մի պատմողական, պատասխանական, հարցական, ով մի հրամայական, մի կոչական, բացասական, հաստատական նախադասութիւն, դու, դու . . .) :
37. Այսպիսով նախադասութիւնները բաժանեցինք կազմութեան, ձեին և ստորոգեալին նայելով : Ըստ կազմութեան—Պարզ, Բաղադրեալ, Միաւորեալ, Միջանկեալ և Յաւելեալ. Ըստ ձեի—Հարցական, Պատասխանական, Պատմողական, Հրամայական, Կոչական և Բացազանչական : Ըստ ստորոգեալի—Բացասական և Հաստատական : (կը կնիր. համեմատիր, օրինակներ բե՛ր) :

Բ). Բ Ա Ռ Ե Ր

1. Եթէ խօսքի մասերը (բառերը) միացնում համաձայնեցնում էինք, մի միտք էր արտայատւում (նախադասութիւն) : Օր. Շունչ գնացյ առան : Եթէ նոյն մասերը չմիացնենք, ստորակէտներով բաժանենք, այն ժամանակ միտք չի դուրս գալ. առան, շունչ, գնացյ. բայց շունչ—ունի առանձին նշանակութիւն, որը արտաքերելիս իմանում ենք որ կենդանու անուն է, որը տեսնում ենք, որը շարժւում է ել : Գնացյ—իր չէ, բայց նշանակում է շարժուել, մի տեղից հեռանալ : Տուն—ելի իրի անուն է, որը տեսնում ենք, մէջում ընակւում ել :
2. Խօսքի այն մասերը, որոնք առանձնակի գործածելիս նշանակութիւն ունին, կոչում են բառեր. Օր. Գիրք, խօսք, նորո՞ո. Նշանակութիւն ունին և բառ են : Վոնց, ճնո՞ո, դնո՞ո—նշանակութիւն չունին և բառ չեն :

ա) Ա. Ն Կ Ե Ր .

3. Բառերը կարելի է արտասանել՝ հնչել կամ մի բերանով՝ մի անդամով, կամ շատ անդամով : Օր. Տաղ խոփ, էալ, մի բերանով՝ միանդամով են հնչւում : Տակ—տակ, Տար—Դին, Տար—դին, ուղան արտասանում ենք երկու անդամով՝ երկու բերանով : Սի—ըէ—լի—լի, Տա—էար—դակ, Գր—չու—իր երեք անդամով : Սի—չու—նու—դաւոն, ու—զոր—մու—լիւն—չորս անդամով եւ :
4. Այն բառերը, որոնք հնչւում են մի բերանով՝ միանդամով, կոչւում են միավանկ. այն բառերը, որոնք հնչւում են երկու անդամով, կոչւում են երկավանկ. երեք անդամով հնչուող բառերը եռավանկ... բազմավանկ: Սակ—միավանկ, Երկառ—Երկավանկ, Ջառարան—Եռավանկ, առարտածայացնութիւն—բազմավանկ :

բ) ՀՆՉԻՒՆ—ՏԱՐ.

5. Իւրաքանչիւր մի վանկ կարելի է այնքան երկարացնել, որ երդի նման ձայներ գուրս գայ : Օր. — Տաղ Ը . . . . . ա . . . զ օ . . . . լ, ի . . . . ա . . . փ : Այնպէս որ իւրաքանչիւր վանկի մէջ մենք կըլսենք որոշ ձայներ :
6. Վանկերի այն մասերը, որոնք բաժանում են որոշ ձայների, կոչւում են հնչիւններ : Հնչիւնն եթէ գրենք թղթի վերալ, կըստանանք տառ, գիր : Օր. ա, ա, գ, դ . . . տառեր են :
7. Հնչիւնների մի մասը երկար հնչւում, երդւում են: Օր. Օ' . . . . , Ո' . . . . , Ռ' . . . . , Ա' . . . . , Ի' . . . . : Իսկ միւս մասը երկար չի հնչւում, չի երդւում. Օր. ֆ, գ, դ ել :
8. Երդուող—երկարացուող հնչիւնները կոչւում են ձայնաւորներ—ձայն ունեցողներ : Օր. օ, ա, ս, լ, ի, է, է, ձայնաւոր տառեր են: Զ'երկարացուող—չ'երդուող հնչիւնները կոչւում են բաղաձայն—երկալն ձայն չունեցողներ : Օր. դ, է, գ, լ, ս, լ, չ . . . բաղաձայն տառեր են :
9. Կան այնպիսի հնչիւններ, որոնք մի ձայն են հանում, բայց մի տառից մի հնչիւնից չեն բաղկացած : Օր. է'ա, ս'ա, ի'ա, ջ'ար կէ'անք մի'աս :
10. Այն երկտառ ձայնաւորները, որոնք մի ձայն են հանում, կոչւում են երկբառառներ. էա, ու, իւ, այ—երկբառառներ են :
11. Կան այնպիսի բաղաձայններ, որոնք հնչելիս գլխաւորապէս լեզուն ենք շարժում : Օր. ա, դ, լ, չ, ս, ա, զ, ի, գ, ն, լ, ն: Կան այնպիսի բաղաձայններ, որոնք հնչելիս գլխաւորապէս շրթունքներն ենք շարժում : Օր. բ, պ, փ, ք, մ: Եւ կան այնպիսիները, որոնք հնչւում են լեզուի և ատամների միջոցով : Օր. ժ, հ, չ, ս ն ա, յ, ծ, չ:
12. Լեզուի միջնորդութեամբ հնչուող բաղաձայնները կոչւում են—Լեզւալին : Երթունքների միջնորդութեամբ հնչուողները—Երթնալին : Ատամների միջ-



նորդութեամբ հնչողները—Ատամնալին : ա, ռ, լ և լեզ. բ, ք,—շրթ.  
ժ, շ—և. ատամնալին :

13. Ամէն մի վանկ կարող ենք երկարացնել, երգել. իսկ երկարացող—երգուող  
են միայն ձայնաւորները, բարաձայնները չեն երգուում, ուստի ամէն մի վանկ  
կը կազմուի այն ժամանակ, երբ մի ձայնաւոր միանալ բարաձայնի հետ : Նը-  
շանակում է բառի մէջ որքան ձայնաւոր գրւում կամ բերանով հնչուում լի-  
նի, այնքան էլ վանկ կը լինի : Կարտառէա ա—ա—է. ուրեմն երեք վանկ է.  
շ—ը—պէտ : Փրկիչ, հնչելիս ասում են գըր—ինչ—ը—ի, ուրեմն երկու  
վանկ կայ գրէնչ—բառի մէջ : Ը—տառը շատ անգամ գրելիս զեղջուում է,  
բայց հնչուում արտասանելիս :
- (Ո՞վ կասի մի բառ, ի՞նչու է բառ. ո՞վ կասի միավանկ, երկավանկ, բազմա-  
վանկ բառ. ո՞վ միավանկ բառը կերգի, քանի հնչիւն կայ. ո՞վ մի երգուող  
տառ կասի, ո՞վ մի չերգուող տառ կասի. ո՞վ մի շրթնալին, ատամնալին, մի  
լեզուալին տառ կասի) :
- (Ո՞վ կասի քանի տառ կայ հայոց լեզուի մէջ (38). ո՞վ կարգով կասի ա, բ,  
շ, ռ, լ....) :
14. Եթէ նախադասութիւնը երկար է և պէտք է մի մասն անցկացնել երկրորդ  
տաղը և անց կացողը մի բառի կէսն է, այն ժամանակ պիտի վանկերի բա-  
ժանենք բառը, և վանկը կամ վանկերը անցկացնենք. վանկը կիսել չի կա-  
րելի : Օր, Կարտառէա չի կարելի բաժանել Կար—ա—պէտ, կամ Կա—բառ—ետ,  
այլ Կա—ը—պէտ :

դ). ՊԱՐՁ, ԲԱՐԴ, ԱՇԱՆՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ և ՅՈՒԱԿԱՊ :

15. Կարող ենք միավանկ և բազմավանկ բառերը առանձին գործածել, կամ ու-  
րիշ բառերի հետ միացնել, կամ մասնիկ աւելացնել : Օր. Տարր, Տարդահեր,  
Տարդիային. արիւն, արիւնաների, արիւնափ :
16. Այն բառերը, որոնք գործ են ածուում առանձին, չեն միացած բառերի հետ  
կամ մասնիկ չեն ընդունած, կոչուում են Պարզ. Օր. Տարր, Տար, Հաշի և լ-  
Պարզ բառերը, եթէ միանուում են ուրիշ բառերի հետ, կոչուում են Բարդ :  
Օր. Տարի—արիւն. Գործ—ա—իալ, Տար—ա—պահ :
17. Այն բառերը, որոնք իրենց սկզբին և վերջին ընդունուում են մասնիկներ—  
ածանցներ, կոչուում են ածանցական բառեր : Օր. մարդիկ—Տարդիային—Տարդի—  
ա—յին, Հոգի—հոգ—ե—իտն : Գոհ—ած—գոհ. Հոգի—անհոգի. Տարդիային, հոգե-  
իտն, ոժգոհ, անհոգի ածանցական բառեր են :
- Ածանցը տարբերւում է բառից նրանով, որ նշանակութիւն չունի առանձին  
գործածուելիս, ինչպէս բառը. Օր. Տարր, կու, Տարիպ—բառեր են, որովհետև  
նշանակութիւն ունեն : Ային, ական, ար, ածանց են, որովհետև առանձին  
գործածուելիս նշանակութիւն չունեն :

18. Բառերի սկզբում աւելացած մասնիկները կոչւում են—նախադաս ածանցներ, իսկ վերջերում աւելացածը յետագոս ածանցներ :
19. Քարդ բառեր և ածանցական բառեր կազմուելիս, երկու բառերի մէջ, բառի և ածանցի մէջ ընկնում են ձայնաւոր տառեր, որպէս զի գիւրահնչիւն, հեշտալուր լինի բառը : Երբեմն էլ ալղակիսի տառեր չեն ընկնում, ուղղակի բառը բառի մօտ է գրւում : Օր. մարդ—որս, հիւր—ընկալ, աւագաման, հոլիոլ, գունդգունդ, բերանակապ, բերանփակէք, արագընթաց, սուտ մուտ, սոքա միջանկեալ տառեր չունեն : Հոգ—ե—կան, հարմա—ա—ար, ոլի—ա—յոր—որոր, գրչ—ա—էռք, պան—ա—տէր ևլ. սոցա մէջ կան տառեր—ե, ա. ա. ևլ. որոնք կապում են բառը՝ ածանցը արմատական բառի հետ :
20. Այն տառերը, որոնք բարդութեան և ածանցման ժամանակ բառը կամ ածանցը կապում են ուրիշ բառի հետ, կոչւում են յօդակապ. ե, ա., ա—կապող տառերը—յօդակապ են :
- (Ո՞վ կասի մի պարզ, մի բարդ, մի ածանցեալ բառ, ո՞րն է յօդակապը):
21. Նախադասութիւնը կամ խօսքը կազմուում են բառերից, ուրեմն ամէն մի բառ նախադասութեան՝ խօսքի մի մասն է կազմում : Ուստի փոխանակ ամելու բառեր, կարող ենք ասել խօսքի մասեր, բանի—մասեր, մասունք բանիներ. (բան—նշանակում է խօսք):
22. Կան այնպիսի մասունք—բանիներ (խօսքի մասեր) այսինքն բառեր, որոնք ցոյց են տալիս՝ նշանակում են իր, առարկալ : Օր. չի, կայտ, գրիչ: Կան այնպիսի բառեր (մասունք—բանիներ), որոնք ցոյց են տալիս առարկալի քանի հատ լինելը, թիւը. Օր. նէ, չորս, երկու, հինգ (փայտ ևլ): Կան այնպիսի բառեր (մասունք բանիներ), որոնք ցոյց են տալիս մի առարկալի արածը, գործողութիւնը. Օր. ես եփէցի. խփելու համար պիտի մի բան, մի գործ անեմ՝ կատարեմ : Խիեցի—բառը գործողութիւն է ցոյց տալիս :
23. Այստեղից երեսում է, որ մասունք բանիները—բառերը տարբեր նշանակութիւններ ունեն, մի խումբ բառեր մի տեսակ նշանակութիւն ունեն, մի ուրիշ խումբ բառեր ուրիշ նշանակութիւն. այնպէս որ տասը խումբ բառեր (մասունք բանիներ) ենք տեսնում, որոնք միմեանցից տարբեր նշանակութեամբ են գործ ածւում :
24. Որպէս զի իմանանք ո՞ր բառը որ խմբին է պատկանում, պիտի հարցնենք. այս բառը ի՞նչ է ցոյց տալիս, ի՞նչ աեսակ բառ է. և որպէս զի ալդ հարցի պատասխանը ճիշդ տանք, չասենք բարդ է, պարզ է, կամ ածանցական է ևլ. բառի տեղ գործ կածենք մասունք—բանի խօսքը և կհարցնենք ի՞նչ մասն բանի է օր. չի—, գորանով կիմանանք թէ չի— տասից որ խմբին պատկանելն է հարցնում :

6

գ). ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆԵՐ

ա). ԳՈՅԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ.

1. Կան այնպիսի բառեր, որոնք արտաքերելիս, իմանում ենք որ ցուց է տալիս մի իր, մի առարկայի, որ աշխարհում կալ : Օր. ձի, կով, ասելով հասկանում ենք այն կենդանիները, որոնք մեզ մօտ պահում ենք, տեսնում ենք, բըռնում շօշափում ենք, որոնք իրական աշխարհում կան : Ուրիշ օր. Աստուած, հոգի, ժաշութիւն, էլի տնուններ են, կան աշխարհումն, բայց տեսնել, շօշափել չենք կարող, միայն մտքով ենք հասկանում, ըմբռնում, միայն մեր մըտաւոր աշխարհում գոյութիւն ունեն :
2. Այն առարկաները, որոնք իրական աշխարհում կան, մեր հինգ զգայարաններով (տեսանելիքով, լսելիքով, շօշափելիքով, հոտոտելիքով և ճաշակելիքով) իմանում ենք, կոչւում են նիւթական առարկաներ : Գրիշ, լանտի, շոյ, չոյ, հոփ, պախակի, ժար ևլ. նիւթական առարկաների անուններ են :
3. Այն առարկաները, որոնք մեր հինգ զգայարաններով չենք իմանում, այլ մտքով ենք միայն հասկանում, ըմբռնում, կոչւում են մտաւորական : Աստուած, հրեշտակ, նեցութիւն, աղբասիրութիւն, ժաշութիւն, մտաւորական առարկաների անուններ են :
4. Նիւթական առարկաներից նրանք, որոնք շունչ են քաշում, կոչւումն շընչաւոր, Տարդ, հենդանի, բայս, ծաղիկ : Նիւթական առարկաներից նրանք, որոնք շունչ չեն քաշում, կոչւում են անշունչ առարկաներ : Օր. ժար, աղ, հոփ, չոյ, գրիշ ևլ:
5. Ալդ բոլոր առարկաներին տուած է մի անուն, որի միջոցով միմեանց հասկացնում ենք թէ այս առարկայի վերայ ենք խօսում և ոչ այն : Զի ասելիս հասկացնում ենք թէ կենդանու անուն ենք տալիս : Քար ասելիս—իմանում ենք մի անշունչ կարծը առարկայ :
6. Այն անունները, որոնք առարկաներին է լատկացրած, կոչւում են Գոյականներ : Զի—Բնչ մասն բանի է, պատասխան—գոյական անուն. Բնչու է գոյական—որովհետեւ առարկայի անուն է. Բնչ տեսակ առարկայ : (Ով կասի մի գոյական անուն, Բնչու, Բնչ տեսակ.... :)
7. Կան այնպիսի գոյականներ, որոնք արտաքերելիս միայն մի առարկայ ենք հասկանում : Օր, Արցախի Շուշի քաղաքում.. : Շուշի ասելով մենք հասկանում ենք Արցախում գտնուած Շուշի քաղաքը, էլ ուրիշ տեղ նոյն գիրքով, նոյն բնակիչներով, նոյն անունով Շուշի չկալ : Կան այնպիսի գոյականներ, որոնք արտասանելիս մեր իմացած շատ առարկաները կարող ենք հասկանալ : Օր, ժաշութէ մեծ է, ժաղադ ասելով կարող ենք հասկանալ Շուշի, Գանձակ, Երևան ևլ : Աստուած Բնչ անհատական անուն է, Երևանի ընդհանուր անուն :

8. Այն գոյականները, որոնք արհատական անուն են նշանակում, մի առարկայ են ցուցնում, կոչում են Յատուկ: Պօշտ, Երասխ, Ասպրոտծ յատուկ են:
9. Այն Գոյականները, որոնք ընդհանուր անուն են նշանակում, շատ միատեսակ առարկաներ են ցուցնում, կոչում են հասարակ: Մարտ, Սեղման, հասարակ են:
10. Հասարակ անուններից նրանք, որոնք խումբ, մի ամբողջութիւն են ցոյց տալիս, կոչում են հաւաքական. Հօփ, Գունդր, Վաշտ, Երամ, Չոհ, Հոյշ, Բուշ, Ժաշվիլի, հաւաքական գոյականներ են:
11. Յատուկ անունները գրւում են գլխատառով: Գեղեցին, Ախուրեան, Սևանայ լիճ, Եջմածին Հայաստան:
12. Մի գոյական անուն ասելիս, կարող ենք իմանալ թէ քանիսի համար է խուռում, մէկի թէ շատի Օր. Ֆ. Տարր եկաւ. Եկողը մէկն է: Մարտիներ են գալիս—եկողները շատ են, մէկից աւելի:
13. Այն գոյականները, որոնք մէկ թուով են գրւում, մէկ առարկայ են ցոյց տալիս, կոչում են Եզակի թուով գոյականներ: Խոկ այն գոյականները, որոնք շատ առարկաներ են ցոյց տալիս, կոչում են Յոգնակի թուով գոյականներ. Տարր, չի, Հապու—Եղանէ է. Տարրէն, չի՞ր, Հապունէր—յոգնանէ:
14. Մի գոյական եզակի թուից լոգնակի գարձնելու համար պիտի աւելացնել եզակի բառի վերջում յետադաս մի ածանց—Եր կամ Ներ: Մազ—եզակի թիւ է, մազ—եր յոգնակի. Գրիչ, Գրիչ—Ներ, խուք—խուք—Եր, սեղան—սեղան—Ներ:
15. Ներ—Եր յետադաս ածանցը կոչում է Յոգնակիացուցիչ ածանց: Միավանկ բառերի վերալ աւելացւում է Եր, բազմավանկ բառերի վերալ Ներ: Օր. Կովեր, մազեր, Ճիւր. տախտակ—Ներ, թանաք—Ներ, գրիչ—Ներ:
16. Գոյական անունները կարող են լինել պարզ—մի արմատից բաղկացած. կարող են լինել բարդ, երկու կամ աւելի արմատներից բաղկացած, և ածանցական, երբ բառի վերալ աւելացած են յետադաս և նախադաս ածանցներ. առեւծ, առան, պարզ բառ են. առանտեր, բարր բառ է. անային—ածանցական է:
17. Գոյականները բարդութեան և ածանցման ժամանակ յօդակապներ են ընդունում. առիւծ—ասսիրտ. գրք—ասկալ. թագ—ասւոր: Նախադաս բացասական ածանցները և ուրիշ մի քանի բառեր յօդակապով չեն միանում բառերի հետ. դժ—գոհութիւն, ան—միտ. ա—գէտ տանտէր—տան—տէր փող—հար յօդակապ չունեն:
18. Գոյականների վերալ զանազան ածանցներ աւելանալով, միևնուն գոյականին զանազան նշանակութիւն են տալիս: Օր. մարդ, մարդկային, մարդկուլին, մարդու, մարդուց, մարդուկ, մարդիներից ևլ: Ալգի—վերան աւելացնենք պան ածանցը—կդառնայ ալգեպան—ալգի պահող. դռնապան, բազպան, պահապան, որդ—ածանցը նշանակում է անող—գնացող, կատարող. առաջնորդ, ճանապարհորդ, ժառանգորդ, փոխանորդ: Ոյ—ածանցով, դպրոց, սղոց, ծաղկոց,

- վարժոյ, տեղ ցոյց տուող: Ուլիւն—ածանց, մաքրութիւն, մարդկութիւն ևլ :
19. Ու, ուց, ով ում, ի, ից, ածանցներն աւելանալով գոյականների վերջերում, նոցա զանազան նշանակութիւն են տալիս. ալդ ածանցները փոփոխում են գոյականների վերջաւորութիւնները: Մարդ, մարդու, մարդոց, մարդով, գործ, գործի, գործով գործում, գործերի ևլ :
20. Գոյականի ալդպիսի առանձնակի փոփոխութիւնը կոչւում է հոլով (փոփոխութիւն). Հոլով կազմող ածանցները կոչւում են հոլովացուցիչ ածանցներ, որոնք են—ուց, ով, ում, ի, ից, ևլ :
21. Գոյականի սկզբնական ձեր, որի վերայ ածանց չի աւելանում, կոչւում է ուղղական հոլով (առաջին փոփոխութիւն): Տուն է քանդուել: Բնչ է քանդուել, որուն. Տարդ եկաւ. ով եկաւ. Տարդ: Տուն, Տարդ անորոշ ուղղական են :
22. Եթէ ուղղական հոլովը որոշեալ է, այն ժամանակ ուղղականի վերջում աւելանում է լ—ու տառը և կոչւում է որոշեալ ուղղական, անորոշ ուղղականից զանազաններու համար: Օր. չին եկաւ, ոտիտակին վայր ընկաւ, չին, ոտիտակին որոշեալ ուղղական են :
23. Անորոշ ուղղականի վերայ եթէ ի, ան, ու ածանցներն աւելացնենք, այն ժամանակ կ'ստանանք գոյականի երկրորդ փոփոխութիւնը—Սեռական հոլովը, որ ցոյց է տալիս մի որ և է անուան պատկանելութիւնը: Օր. ոտիտակին կէ-սը, Տարդուա պատկեր. Բնչին կէսը, ում պատկերը—ոտիտակին, Տարդու—սեռական հոլով են :
24. Սեռականի ածանցները կազմում են և երրորդ—տրական հոլովը, որ ցոյց է տալիս գործողութեան պատկանելութիւնը: Նա ծեծի արժանի է. վարդը ընծայեցի նորան. Բնչը է արժանի, ում ընծայեցի—արժանի է, ընծայեցի գործողութիւն ցոյց տուող բառերի մօտ դրուած ոտոտին, նրան—բառերը տրական են և ցոյց են տալիս թէ գործողութիւնը իրենց է պատկանում :
25. Անորոշ տրական հոլովի վերայ աւելանում է—լ—ու տառը և դառնում է որոշեալ: Օր. նա արժանի է այս ոտոտին. ես խփեցի ծառացին. ոտոտին, ծառացին որոշեալ տրական են :
26. Եթէ անորոշ տրականի վերջում աւելացնենք—ց—տառը, կամ որոշ դէպքերում (գ. Հոլովման մէջ) ուղղականի վերջում—ից—ածանցը, այն ժամանակ կ'ստանանք չորրորդ հոլովը—բացառականը, որը ցուցնում է թէ գործողութիւնը ումնից է սկսուում: Ես Գրիգորից գժգահ եմ. ես գալիս եմ Երեսնից. ումնից. որտեղից. այս, փալտից է շինած, Բնչից: Երեսնից, Գրիգորից, Փալտից, ողբանելին—ից—բաց. հ. են :
27. Եթէ անորոշ ուղղականի վերայ աւելացնենք—ով—ածանցը, այն ժամանակ կ'ստանանք հինգերորդ հոլովը—գործիականը. որ ցուցնում է թէ գործողութիւնը ումնով է կատարւում: Սրբ խփեցի, Պետրոսով լաղթեցի, Բնչով, ումնով: Սրբաւ Պետրոսով—գործիական հոլով են :

28. Անորոշ ուղղականի վերալ եթէ աւելացնենք—ում—հէջ ածանցը, կ'դառնայ վեցերորդ հոլովը—ներգոյականը, որ գործողութիւնը մի բանում կատարելն է ցուցնում: Զրում ձկներ կալին. ֆայֆում որդեր կան, Պէտրովի մէջ շատ բան է նկատւում. որտեղ, բնչում, ումնում: Փայֆում, ջրում, Պէտրոսում ներգոյական հոլով են: Յատուկ անունների ներգոյականները և անձ ցուց տուող անուններինը—աւելի ընտիր է ում—ի փոխանակ հէջ գործ ածել. այս հէջը չպիտի շփոթել յարաբերութիւն ցուց տուող հէջ նախադրութեան հետ:
29. Որոշեալ բացառականի, գործիականի և ներգոյականի վերջում աւելանում են—ը—տառերը: Զրով, ջրում, ջրնցը, որոշեալ են. Ջրում, ջրով, ջրեց—անորոշ:
30. Անորոշ ուղղականի նման է և եօթներորդ հոլովը—հայցականը. որոշեալ հայցականը նման է որոշեալ ուղղականին: Ես հարդ տեսալ, ես փայտ տեսալ. ինչ: Ես փայտ տեսալ. ես եղան տեսալ, ինչը: Մարդ, փայտ, անորոշ և հարդը, փայտը որոշեալ հայցական են:
31. Հայցականը նման է տրականին, երբ մարդկանց անունները, անձնաւորութիւն ցուց տուող բառերն որոշեալ են: Օր. ես տեսալ հօրդ, հօրդ, հարդուն, Պէտրովն ել: Բոլորն որոշեալ են և հայցականը—տրականի նման: Իսկ եթէ անորոշաբար գործ ածենք, ուղղականի նման կ'լինեն հայցականները: Օր. ես ի հայտ տեսալ, որ որդու մահն ողբում էր: Մէ հայր—անորոշ հայց. է—ուղղականի նման:
32. Այն տառերը՝ ածանցներն որոնք եօթ տեսալ հոլովներ են կազմում, կոչւում են հոլովացուցիչ տառեր, ածանցներ, իւրաքանչիւր հոլով կազմող տառը, ածանցը նոյն հոլովի անունով է կոչւում. սեռականացուցիչ (ի, ու, ան) տրականացուցիչ (ի, ու, ան). բացառականացուցիչ (ից, ուց). գործիականացուցիչ (ով, անը). ներգոյականացուցիչ (ում, հէջ):
33. Բոլոր գոյականները միենոյն հոլովացուցիչները չունեն. մի խմբի սեռականացուցիչն է—է, երկրորդ խմբինը—ու, երրորդինը—ան—եան: Առաջի խմբի բացառականացուցիչն է (ից), միւսինը—(ուց): Գործիականացուցիչն է—ավ: Ներգոյականացուցիչը—ում: Այդ հոլովներն ունեն և իրենց լոգնակիները:
34. Գոյականների այդ երեք խմբերը, որոնք տարբեր սեռականներ ունեն և փոփոխուում են թւով էլ, կոչւում են հոլովումներ:
35. Երեք հոլովումների լոգնակիները միենոյն են, բոլորի ուղղականը վերջանում է էր կամ ներ, սեռականը—ի, բաց.—ից. գործ.—ով, ներգ.—ում:

Ա. Հ Ա Ր Ա Հ Հ Ա Լ Ա Վ Ա Տ

Առաջի հոլովումն.

Երկրորդ հոլովումն.

Երրորդ հոլովումն.

Ե Զ Ա Կ Ի

|             |           |         |                                  |
|-------------|-----------|---------|----------------------------------|
| Ուղղական,   | Սեղան,    | Հոգի,   | Ողորմութիւն—տուն                 |
| Սեռական,    | Սեղանի,   | Հոգու,  | Ողորմութեան—տան                  |
| Տրական,     | Սեղանի,   | Հոգու,  | Ողորմութեան—տան                  |
| Բացառական,  | Սեղանից,  | Հոգուց, | Ողորմութիւնից—տնից               |
| Գործիական,  | Սեղանով,  | Հոգով,  | Ողորմութիւնով—տնով               |
| Ներգոյական, | Սեղանում, | Հոգում, | Ողորմութեան մէջ. տնում (տան մէջ) |
| Հայական,    | Սեղան,    | Հոգի,   | Ողորմութիւն—տուն                 |

Յ Ո Գ Ն Ա Կ Ի

|     |              |             |                           |
|-----|--------------|-------------|---------------------------|
| Ու. | Սեղաններ,    | Հոգիներ,    | Ողորմութիւններ—տներ       |
| Ա.  | Սեղանների,   | Հոգիների,   | Ողորմութիւնների—տների     |
| Տ.  | Սեղանների,   | Հոգիների,   | Ողորմութիւնների—տների     |
| Բ.  | Սեղաններից,  | Հոգիներից,  | Ողորմութիւններից—տներից   |
| Գ.  | Սեղաններով,  | Հոգիներով,  | Ողորմութիւններով—տներով   |
| Դ.  | Սեղաններում, | Հոգիներում, | Ողորմութիւններում—տներում |
| Զ.  | Սեղաններ,    | Հոգիներ,    | Ողորմութիւններ—տներ       |

Ո Ւ Հ Ե Ա Հ Հ Ա Լ Ա Վ Ա Տ

Ե Զ Ա Կ Ի

|     |                        |                     |                                                  |
|-----|------------------------|---------------------|--------------------------------------------------|
| Ու. | Սեղան( <i>ը</i> ),     | Հոգին,              | Ողորմութիւն( <i>ը</i> )—տուն( <i>ը</i> )         |
| Ա.  | Սեղանի( <i>ն</i> ),    | Հոգու( <i>ն</i> )   | Ողորմութեան—տան( <i>ը</i> )                      |
| Տ.  | Սեղանին( <i>ը</i> ),   | Հոգուն( <i>ը</i> ), | Ողորմութեան( <i>ը</i> )—տան( <i>ը</i> )          |
| Բ.  | Սեղանից( <i>ը</i> ),   | Հոգուց( <i>ը</i> ), | Ողորմութիւնից( <i>ը</i> )—տնից( <i>ը</i> )       |
| Գ.  | Սեղանով( <i>ը</i> ),   | Հոգով( <i>ը</i> ),  | Ողորմութիւնով( <i>ը</i> )—տնով( <i>ը</i> )       |
| Դ.  | Սեղան( <i>ը</i> ),     | Հոգին,              | Ողորմութիւն( <i>ը</i> )—տուն( <i>ը</i> )         |
| Զ.  | Սեղաննում( <i>ը</i> ), | Հոգում( <i>ը</i> ), | Ողորմութեան( <i>ը</i> ) մէջը—տան մէջ<br>(տնումը) |

Յ Ո Ւ Ն Ա Կ Ի

|     |                 |                |                                 |
|-----|-----------------|----------------|---------------------------------|
| Ու. | Սեղաններ(ը),    | Հոգիներ(ը),    | Ողորմութիւններ—տներ(ը)          |
| Ս.  | Սեղանների,      | Հոգիների,      | Ողորմութիւնների—տների           |
| Բ.  | Սեղաններին,     | Հոգիներին,     | Ողորմութիւններին—տներին         |
| Ք.  | Սեղաններից(ը),  | Հոգիներից(ը),  | Ողորմութիւններից(ը)—տներից(ը)   |
| Ն.  | Սեղաններով(ը),  | Հոգիներով(ը),  | Ողորմութիւններով(ը)—տներով(ը)   |
| Հ.  | Սեղաններում(ը), | Հոգիներում(ը), | Ողորմութիւններում(ը)—տներում(ը) |
|     | Սեղաններ(ը),    | Հոգիներ(ը),    | Ողորմութիւններ(ը)—տներ(ը)       |

36. ա. Հոլովման վերայ հոլովւում են բազմաթիւ գոյականներ, փայտ, գործ, ասեղ, խնձոր, ծառ, թռչուն, թանաք, գիրք, տախտակ, գրչակոթ ևլ:
37. բ. Հոլովման պէս հոլովւում են ուղղականում—ի—վերջացած բառերը. եկեղեցի, մատանի, ձի, հայելի, բանալի, Անի, քաղաքացի, Երևանցի, կենդանի, աղաւնի, տանձենի ևլ բ) Բայերի սկզբնական ձևերը—ել—ած վերջացած բառերը բ—հոլովման վերայ են հոլովւում, ուտել, կարդալ, գրել, նստել, ծեծել ևլ :
38. գ. Հոլովման վերայ հոլովւում են բոլոր լին—վերջացած բառերը, բայի Յարութիւն լատուկ անունից, գրութիւն, քաջութիւն, մարդկութիւն, գործունէութիւն : Բայի Համբարձում լատուկ անունից բ). Ում կամ ումն վերջացած բառերը. հարցում(ն), խաւարում(ն), գրաւում(ն), դադարում(ն), օծում(ն), խոստում(ն), ուսում(ն), ևլ գ). Այն բառերը, որոնց արմատի—ատառ զեղուել է. նուռ(ն), դուռ(ն), մուկ(ն), եղ(ն), գառ(ն), գարուն, թռռ(ն), լեռռ(ն). շատերը էլ ալսպէս չեն հոլովւում, այլ առաջին հոլովման պէս :
- դ) Փամանակ ցոյց տուող բառերը. ձմեռ, ամառ, աշուն, օր, կէսօր, գիշեր, ժամ ևլ: Սոքա հոլովւում են նաև ա, հոլովման պէս :
39. Ազգակցութիւն ցոյց տուող բառերը հոլովւում են առանձնակի կերպով :

Ա Շ Ա Ր Ա Հ Հ Ա Լ Ա Խ Ա Տ

Ե Զ Ա Կ Ի

|     |            |             |               |
|-----|------------|-------------|---------------|
| Ու. | Հալր,      | Քոլր,       | Տիկին,        |
| Ս.  | Հօր,       | Քրոջ,       | Տիկնոջ,       |
| Բ.  | Հօր,       | Քրոջ,       | Տիկնոջ,       |
| Ք.  | Հօրից,     | Քրոջից,     | Տիկնոջից,     |
| Ն.  | Հօրով,     | Քրոջով,     | Տիկնոջով,     |
| Հ.  | Հօր (մէջ), | Քրոջ (մէջ), | Տիկնոջ (մէջ), |
|     | Հալր,      | Քոլր,       | Տիկին,        |



(36-97) 187 - 1000 /

Յ Ա Գ Ն Ա Կ Ի

|     |            |            |              |
|-----|------------|------------|--------------|
| Ու. | Հայրեր,    | Քոլրեր,    | Տիկիններ,    |
| Ս.  | Հայրերի,   | Քոլրերի,   | Տիկինների,   |
| Բ.  | Հայրերի,   | Քոլրերի,   | Տիկինների,   |
| Ֆ.  | Հայրերից,  | Քոլրերից,  | Տիկիններից,  |
| Գ.  | Հայրերով,  | Քոլրերով,  | Տիկիններով,  |
| Ն.  | Հայրերում, | Քոլրերում, | Տիկիններում, |
| Հ.  | Հայրեր,    | Քոլրեր,    | Տիկիններ,    |

Ո Ւ Ա Հ Ե Ա Հ Լ Հ Ա Հ Ե Ա Հ Վ Ա Հ Ե Ա Հ Վ

Ե Զ Ա Կ Ի

|     |                       |                        |                          |
|-----|-----------------------|------------------------|--------------------------|
| Ու. | Հայր( <i>ը</i> ),     | Քոլր( <i>ը</i> ),      | Տիկին( <i>ը</i> ),       |
| Ս.  | Հօր( <i>ը</i> ),      | Քրոջ( <i>ը</i> ),      | Տիկնոջ( <i>ը</i> ),      |
| Բ.  | Հօր( <i>ը</i> ),      | Քրոջ( <i>ը</i> ),      | Տիկնոջ( <i>ը</i> ),      |
| Ֆ.  | Հօրից( <i>ը</i> ),    | Քրոջից( <i>ը</i> ),    | Տիկնոջից( <i>ը</i> ),    |
| Գ.  | Հօրով( <i>ը</i> ),    | Քրոջով( <i>ը</i> ),    | Տիկնոջով( <i>ը</i> ),    |
| Ն.  | Հօրը մէջ( <i>ը</i> ), | Քրոջը մէջ( <i>ը</i> ), | Տիկնոջը մէջ( <i>ը</i> ), |
| Հ.  | Հօր( <i>ը</i> ),      | Քրոջ( <i>ը</i> ),      | Տիկնոջ( <i>ը</i> ),      |

Յ Ա Գ Ն Ա Կ Ի

|     |                       |                       |                         |
|-----|-----------------------|-----------------------|-------------------------|
| Ու. | Հայրեր( <i>ը</i> ),   | Քոլրեր( <i>ը</i> ),   | Տիկիններ( <i>ը</i> ),   |
| Ս.  | Հայրերի( <i>ն</i> ),  | Քոլրերի( <i>ն</i> ),  | Տիկինների( <i>ն</i> ),  |
| Բ.  | Հայրերի( <i>ն</i> ),  | Քոլրերի( <i>ն</i> ),  | Տիկինների( <i>ն</i> ),  |
| Ֆ.  | Հայրերից( <i>ը</i> ), | Քոլրերից( <i>ը</i> ), | Տիկիններից( <i>ը</i> ), |
| Գ.  | Հայրերով( <i>ը</i> ), | Քոլրերով( <i>ը</i> ), | Տիկիններով( <i>ը</i> ), |
| Ն.  | Հայրերում,            | Քոլրերում,            | Տիկիններում,            |
| Հ.  | Հայրերի( <i>ն</i> ),  | Քոլրերի( <i>ն</i> ),  | Տիկինների( <i>ն</i> ),  |

40. Հօր—նման հոլովում են մալր, եղբայր, հօրեղբայր, ևլ : Քրոջ նման հոլովում են—կին, որի լոգնակին լինում է կանալք, կանանց, կանանցից, կանանցով : Ընկեր, տէր, հօրաքոյր, մօրաքոյր :
41. Աղջիկ քառը տարբեր հոլովում ունի. աղջիկ, աղջկալ(*ն*), աղջկանից, աղջկանով, աղջիկներ, աղջիկների ևլ : Մարդու լոգնակին լինում է մարդիկ կամ մարդիկներ և ոչ մարդեր. մարդիկների, մարդիկներց ևլ \*
42. Յատուկ անունները հոլովում են ա. հոլովման պէս, միայն գրաբարի նը ման լոգնակի սեռականը մի քանի տեղերում այ, այ, էյ, են վերջանում փո-

խանակ երի, կամ ների, Հայերի, Յոյների, Հրէաների—սովորական ձև է. բայց  
ասում են Հայոց պատմութիւն, Յունաց, Հրեւ պատմութիւն :

43. Երեք տեսակ հոլովումները փոփոխում են՝ լինում են երկու ձեռվ, որու-  
շեալ և անորոշ :
44. Որոշեալ հոլովում կոչւում է այն հոլովումը, որի մէջ հոլովուղի բառերը  
յախնի են, ծանօթ են մեզ : Օր. հայը, տախտակը, գերքը :
45. Որոշեալ բառերի վերջում դրւում է—ը—տառը, եթէ բառը բաղաձայնով  
է վերջանում : Օր. գերք—ը. և ՚—երը բառը ձայնաւորով է վերջանում :  
Օր. ձի՛, ծառն երեխան : Կատ բաղաձայներով վերջացած բառի վերջը ՚ է  
դրւում ը—ի փոխարէն, երը յաջորդ բառը ձայնաւորով է սկսում : Օր.  
նորա գերքն է (նորա գերքը է) :
46. Անորոշ հոլովում տեղի է ունենում այն ժամանակ, երը բառը անյատ է,  
անորոշ է, անծանօթ է, այն ժամանակ չ կամ ՚ չի աւելանում ալդպիսի  
բառերի վերայ : Օր. մարտ եկաւ. տախտակ վէր ընկաւ, մարտ, տախտակ անո-  
րոշ է, որ մարդը, որ տախտակը, յայտնի չէ :
47. Գոյականների հոլովման ժամանակ զանազան ձայնաւոր տառեր զեղջւում  
են, դուրս են ձգւում բառից : Օր. սիր, սեռ—սրբի, ջուր—ջրէ : Իսկ շատ  
անդամ տառը փոխւում է ուրիշ ձայնաւորի. հոշեն, հոշուի :
48. Ի—ձայնաւորը եզակիում դուրս է ձգւում շատ անդամ. սիր, սրբի, հոշե—  
հոգւուլ, սրբէլ, մատի, մատիկ, մատիրուլ, մատի, մատիրով, մատի վշից. յոզնակիում  
նոյնպէս զեղջւում է, բացի ՚—վերջացած միավանկներից—լի, չի, չիւրով :  
(բայց դերք—դերքով և ՚չ դրքավ, հիմք հիմքից) : Ու—երկբարբառը միա-  
վանկների մէջ զեղջւում է. ջուր, ջրէ, ջրերում, լուր, լրի—լրերից, սուր, սրի,  
սրեր : Ում՞ն վերջացած բառերում զեղջւում են. խոսրում—խոսրաման, խոսրում—  
խոսրաման, հարցում—հարցման, իսկ խոսրումներ, հարցումներ : Իւ—երկբարբառը ե-  
զակիում փոխւում է սու—ի, յոդնակիում ՚չ. անիւ—անուի, իւի—իսուի, հո-  
շե—հոշուի, հոլիւ—հոլուի, բայց հովեներ, անիւներ, իսուներ :
49. Գոյականները եթէ վերջանում են ա հնչիւններով, այն ժամանակ ունե-  
նում են ա—ս—ից յետոյ յ տառը. բացառութիւն են կազմում յատուկ  
անունները. ծառայ, փեսայ, տախտակ, ուշիւ, երրողա, Սուր, Յովանանա, Յուդո :

## բ) ԱԾԱԿԱՆ ԱՆՌԻՆ

1. Գոյական անունները արտաքերելիս իմանում ենք ինչ առարկայ ենք ուզում հասկացնել : Օր. չե, ծաղիկ ասելով գիտենք չեն, ծաղիւը ինչ են. բայց արդեօք ինչպիսի են, լաւ, վատ, մեծ, փոքր. հոտաւէտ, գեղեցիկ, եւ. այդ չենք իմանում : Իսկ եթէ ասեմ հոգուածութ ծաշին, գեղեցիկ չե, այն ժամանակ կիմանանք ինչպիսի ծաշին է, ինչպիսի չե է :
2. Այն բառերը, որոնք ցոյց են տալիս գոյականների ինչպիսի լինելը, որպիտութիւնը, լատկութիւնը, կոչում են Ածական անուն—որպիտութեան անուն : Մաքուր մարդ, սիրուն տղայ, գեղեցիկ շոր, նոր ջուր, հագուր, սիրուն, գեղեցիկ նոր ցոյց են տալիս գոյականների որպիտութիւնը, ածականներ են :
3. Ածականները գոյականների պէս կազմութեան կողմից լինում են պարզ, բարդ և ածանցական : Մէծ, մէծամորին, մէծաւոր, ծանր, ծանրաշարժ, ծանրագոյն, Սև, սևաչուայ, սևագոյն, տուխ-ծասիրո, ժարաւոր, արտգոշարժ, արտգոշնլայ :
4. Ածանցները լինում են լետադաս և նախադաս—բացասականներ. անխոհեմ, դժբախտ, դհաս, ապուշ, գիտուն, ամաչիռ, բանական, զօրուոր, պտղաւետ, մարդկայն, մարդկեղեցն—պտղեղեցն, արեւետան, Թագէոսեան :
5. Կան այնպիսի ածականներ, որոնք այնպիսի լատկութիւն են ցոյց տալիս, որ հետո իրենց է պատկանում—իրենց բնութիւնից է առնուած, կարող է այդ լատկութիւնը զօրեղանալ և թուլանալ : Օր. յիշոր մարդ, աւելի յիշոր, ամենայիշոր մարդ. հագուր տուն, աւելի մաքուր և ամենագուրուր տուն : Կան այնպիսի ածականներ, որոնք այնպիսի (լատկութիւնը) ուրիշ առարկայի հետ ունեցած յարաքերութիւն են ցոյց տալիս. ինչ նիւթից շինուած լինելը, տեղը, ժամանակը, որոնք զօրեղանալ և թուլանալ չեն կարող : Օր. ժարէ ապակի, ամենա-ժարէ ապակի ասել չի կարելի և ցոյց է տալիս ապակու ինչից շինած լինելը. դեղացի մարդ, այսօրուան ինչոյւքը ել :
6. Որպիտութիւն ցոյց տուող առաջին տեսակ ածականները կոչում են Որպիկական, փոփր, աւելի փոփր, ամենափոփր : Փոփրը—որպակական ածական է :
7. Յարաքերական—որպիտութիւն ցոյց տուող ածականները կոչում են Յարաքերական : Ազգանուն ցոյց տուող եան—եան մասնիկաւոր բառերը յարաքերական ածական են, Գ—Աւելիսեան, Գ—Միստուան, Յակովէանց—Գ: Գոյականից կազմուած—այն, եղեն, ախոն, անի, ածականները յարաքերական են հարդիայն, հոգեղեցն, գուտասական, հագնաւանի, երկաւի—երկաւեղեցն, կամ երկաւեայ, պղնչի, պղնչեղեցն—պղնչեայ ել :
8. Որպակական ածականները կարող են զօրեղանալ և թուլանալ երեք աստիճաններով : Օր. մէծ, աւելի մէծ, ամենամէծ, զար, աւելի վատ, ամենավատ :
9. Այն որպակական ածականները, որոնք թէւ համեմատում են ուրիշ նման յատկութիւնների հետ և ածականի սկզբնական ձևն են, ածելութիւն չեն

- ցոյց տալիս կոչւում են Դրական աստիճանով ածականներ : Օր. վագ, մաքուր, յիշար, խելօն և լ—Դրական աստիճան են :
10. Այս որակական ածականները, որոնք համեմատւում են ուրիշ նման ածականների հետ և նոցանից աւելի կամ պակաս լինելն են ցոյց տալիս, կոչւում են Բաղդատական աստիճանով ածականներ : Աւելի յիշար, (իմարագողն) աւելի վագ, աւելի խելօն, բաղդատական աստիճան են. բաղդատականացուցիչ է աւելի բառը և գրյա—ածանցը :
  11. Այս որակական ածականները, որոնք համեմատւում են ուրիշ նման ածականների հետ և ցոյց են տալիս իրենց գերազանցութիւնը կամ ստորութիւնը նոցանից, կոչւում են Գերադրական աստիճանով ածականներ : Գերադրականացուցիչն է ամեն, շատ ևլ : Օր. ամենագեղեցիկն, ամենամեծ, ամենափոփոքը, ամենասուրբել, գերադրական աստիճան են : Գերադրականը կարող է լինել բացարձակ, երբ համեմատելի լատկութիւնը համեմատուողից շատ բարձր կամ ցած է : Օր. ամենից ագել, ամենից մեծ, ամենից հարստագ ևլ :
  12. Ածականները դրւում են գոյականներից առաջ և չեն հոլովւում, եթէ գոյականաբար են գործ ածւում, հոլովւում են գոյականների նման :
  13. Որոշեալ հոլովման ժամանակ յօդը (ը, ն) դրւում է գոյականի վերայ, իսկ մէ անորոշ յօդը ածականից առաջ : Մի լուս մարդ. լուս մարդուն. մի՛ անպիտուն գոյց անպիտան գոյց :

### Ածականների հոլովումն.

| (Անորոշ հոլովում) | Եպահնելի           | (աստանչին)      |
|-------------------|--------------------|-----------------|
| Ուղղական          | գեղեցիկ պարտէզ,    | հարուստ,        |
| Սեռական           | գեղեցիկ պարտէզի,   | հարստի,         |
| Տրական            | գեղեցիկ պարտէզի,   | հարստի,         |
| Բացառական         | գեղեցիկ պարտէզից,  | հարստից,        |
| Գործիական         | գեղեցիկ պարտէզով,  | հարստով,        |
| Ներգոյական        | գեղեցիկ պարտէզում, | հարստում (մէջ), |
| Հայցական          | գեղեցիկ պարտէզ,    | հարուստ,        |

Յ ա գ ն ա կ ի կ

|            |                    |                |
|------------|--------------------|----------------|
| Ուղղական   | գեղեցիկ պարտէզներ, | հարուստներ,    |
| Սեռական    | , պարտէզների,      | հարուստների,   |
| Տրական     | , պարտէզների,      | հարուստների,   |
| Բացառական  | , պարտէզներից,     | հարուստներից,  |
| Գործիական  | , պարտէզներով,     | հարուստներով,  |
| Ներգոյական | , պարտէզներում,    | հարուստներում, |
| Հայցական   | , պարտէզներ,       | հարուստներ,    |



|     | Ե Ա Ա Խ Ա Խ Ա Խ  | (Ուրոշեալ Հուշաբնամ) | Յ Ա Գ Ա Ա Խ Ա Խ     |
|-----|------------------|----------------------|---------------------|
| Ու. | գեղեցիկ պարտէզը, |                      | գեղեցիկ պարտէզները, |
| Ո.  | , պարտէզի(ն)     |                      | , պարտէզների(ն),    |
| Տ.  | , պարտէզին       |                      | , պարտէզներին,      |
| Բ.  | , պարտէզիցը,     |                      | , պարտէզներիցը,     |
| Գ.  | , պարտէզովը,     |                      | , պարտէզներովը,     |
| Ն.  | , պարտէզումը,    |                      | , պարտէզներումը,    |
| Հ.  | , պարտէզը,       |                      | , պարտէզները,       |

դ) ԹՌԻԱԿԱՆ ԱՆՈՒՆ

- Եթէ գոյական անունները առանձնակի արտաքերենք, չենք իմանալ քանի առարկայի վերայ է խօսում : Օր. ձի, տներ, եղ, գրքեր. իմացանք որ շատ ու քչերի համար է խօսում, բայց քանի հատ է չգիտենք, երկու է, երեքէ, չորս է. պիտի ասենք մէկ ձի, երեք տուն. չորս գիրք որ հասկանանք քանին է :
- Այն բառերը, որոնք առարկաների թիւը՝ քանակը ցոյց են տալիս, կոչւում են թուական անուններ : Օր. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ, ինը, տասը, տասնը մէկ, քսան, երեսուն, քառասուն, լիսուն, վաթսուն, եօթանասուն. ութսուն, ինըսուն, հարիւր, հարիւր մէկ, երկու հարիւր, հազար, միլիոն ևլ :
- Եթէ ուզում ենք իմանալ քանի առարկայ կայ, պիտի համարենք մէկ, երկու—երեք . . . ևլ : Խակ եթէ կամենում ենք իմանալ ո՞ր առարկան ո՞ր տեղում ո՞ր կարգումն է, ո՞րն է առաջ, որն յետով, պիտի այսպէս համարենք—առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, տասերորդ, քսաներորդ, երեսներորդ, հարիւրերորդ, հազարերորդ ևլ :
- Քանի հատ լինել ցոյց տուող թուականները կոչւում են Քանակական. դա ցոյց տուող թուականները կոչւում են Դասական, դասականացուցիչ ածանցն է լրիդ. եր—լրիդ. չոր—լրիդ. (բացառութիւն է մէկը, որի դասականը է առաջին և ոչ մէկերորդ :
- Նոյ ածանցը թուականի վերայ աւելանալով, չափ ցոյց տուող թուական է դարձնում, մէկանոյ, երկուանոյ չորսանոյ ևլ :
- Թուականները դրսում են գոյականից առաջ և չեն հոլովում, իսկ եթէ գոյականի տեղ են դրւում, առանձին են հոլովում գոյականների նման :
- Ա. և Ու. մէկ, մի(ն), երկու(ս), երեք, չորս, տաս(ը), վեցերորդ,  
Տ. և Սեռ. մէկի, մինի, երկուսի երեքի, չորսի, տաս(ն)ի, վեցերորդի,  
Բաց. մէկից, մինից, երկուսից, երեքից, չորսից, տաս(ն)ից վեցերորդից,  
Գործ. մէկով, մինով, երկուսով, երեքով, չորսով, տաս(ն)ով վեցերորդով,  
Ներդ. մէկում, մինում, երկուսում, երեքում, չորսում, տասնում վեցերորդում  
Յոգնակի (մէկեր, երկուսներ, երեքներ, չորսեր, տասներ, վեցերորդներ)

7. Սոցա լոգնակին ցոյց է տալիս զանազան առարկաների խմբեր, որոնցից իւրաքանչիւրը չորսերից հինգերից ել. պիտի բաղկացած լինի :
8. Գոյականի հետ—երեք հոգի, երեք հոգու, երեք հոգով ել. հազար զինուոր, հազար զինուորի, հազար զինուորից : Երկրորդ կարդ, երկրորդ կարդի երկրորդ կարդերում. հարիւր հազարերորդ տող, հարիւր հազարերորդ տեղում:

Դ) Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

1. Եթէ ունենանք մի քանի պարզ նախադասութիւններ, որոնց ենթական միւնոյն անունը լինի, այն ժամանակ կրկնուող անունը ամէն անդամ չենք ասում, այլ գնում ենք նորա տեղը մի ուրիշ բառ : Օր. Պէտրոսը գնաց տուն, Պէտրոսը կերաւ հաց, Պէտրոսը քնեց. այդպէս չենք ասում, այլ ալսպէս. Պէտրոսը գնաց տուն, նո հաց կերաւ, նո քնեց : Պէտրոսի տեղ դրւում է նո բառը :
2. Այն բառերը, որոնք դրւում են անունների տեղ, կոչւում են գերանուններ : Օր. նո գնաց. դու խմեցիր. մէնք կերանք ել. նո, դու, մէնք—գերանուններ են :
3. Այն գերանունը, որ դրւում է անձի տեղ. մարդու տեղ, կոչւում է անձնական գերանուն : Օր. ես, դու, նո, մէնք, դուքս, նոքս, իսպան :
4. Այն գերանունը, որ մի որևէ է առարկալ է ցոյց տալիս, կոչւում է Ցուցական : Օր. ա՛յս (մարդ) ա՛յշ, ա՛յն, սո՛, դո՛ւ, նո՛ւ :
5. Այն գերանունը, որ պատկանելիութիւն, ստացուածք է ցոյց տալիս, կոչւում է Ստացական : Անձնական գերանունների սեռական հոլովը ստացական է, որովհետեւ առարկալի պատկանելիութիւն ցոյց տուողը միայն սեռական հոլովն է : Իմ, առ, մէր, չեր, իւր, նոյս ստացական են, իմ (գիրքը), մէր (տունը) ել :
6. Այն գերանունը, որ մի անուան յարաբերութիւն է ցոյց տալիս, կոչւում է յարաբերական : Պէտրոսը, որը եկաւ : Որ—յարաբերական գերանուն է :
7. Այն գերանունը, որը անորոշ անունի տեղ է դրուած, կոչւում է Անորոշ : Օր. ամէն, միւս, ուրիշ, ոմանք, ոչ ինչ, ոչ մին, ոչ ոչ :
8. Այն գերանունը, որ հարցում է ցոյց տալիս, հարցնում է, կոչւում է հարցական : Օր. ա՞լ եկաւ, ա՞ն ես ասում, ա՞լպիսի ել. ա՞վ, ա՞ն, ա՞րդիսի—հարցական գերանուններ են :
9. Այն գերանունը, որ յատկութիւն է ցոյց տալիս, կոչւում է Որակական : Օր այսպիսի, այնպիսի, որպիսի, նոյնպիսինչը : Այն գերանունը, որ քանակութիւն, չափ է ցոյց տալիս, կոչւում է քանակական : Օր. այսպան, նոյնպան, որչան, այդպան, այնչափ ել :
10. Այն գերանունները, որոնք գոյականի հետ են դրւում, գոյականից առաջ են լինում, չեն հոլովում. իսկ առանձին գործածուող գերանունները հոլովում են :
11. Անձնական գերանունները իբրև որոշեալ անձինքների տեղ դրուող բառեր որոշեալ հոլովում ունեն, հայցականը արականին նման :

Անձնական դերանուններ։

*ե զ ա կ ի*

|       |         |          |              |              |
|-------|---------|----------|--------------|--------------|
| Ուղ.  | ես,     | դու,     | նա,          | ինքը         |
| Սեռ.  | իմ,     | քո,      | նրա (նորա),  | իւր (իրա),   |
| Տրակ. | ինձ,    | քեզ,     | նրան (նորան) | իրան (իրեն), |
| Բաց.  | ինձնից, | քեզնից,  | նրանից,      | իրանից,      |
| Գործ. | ինձնով, | քեզնով,  | նրանով,      | իրանով,      |
| Ներդ. | ինձնում | քեզնում, | նրանում,     | իրանում,     |
| Հայց. | ինձ,    | քեզ,     | նրան,        | իրան,        |

*լ ո գ ն ա կ ի*

|       |                |               |               |              |
|-------|----------------|---------------|---------------|--------------|
| Ուղ.  | մենք,          | դուք,         | նրանք (նոքա), | իրանք (ենք), |
| Սեռ.  | մեր,           | ձեր,          | նրանց,        | իրանց,       |
| Տրակ. | մեզ,           | ձեզ,          | նրանց,        | իրանց,       |
| Բաց.  | մեզնից,        | ձեզնից,       | նրանից,       | իրանից,      |
| Գործ. | մեզնով (մեզա.) | ձեզնով (զա.)  | նրանցով,      | իրանցով,     |
| Ներդ. | մեզնում (զա.)  | ձեզնում (զա.) | նրանում,      | իրանցում,    |
| Հայց. | մեզ,           | ձեզ,          | նրանց,        | իրանց,       |

Ցուցական դերանուններ։

*Եզակի*

*լոգնակի*

|       |               |               |              |              |
|-------|---------------|---------------|--------------|--------------|
| Ուղ.  | սա,           | դա,           | սրանք (սոր.) | դրանք (դոր.) |
| Սեռ.  | սրա, (սորա)   | դրա, (դորա)   | սրանց,       | դրանց,       |
| Տրակ. | սրան, (սորան) | դրան, (դորան) | սրանց,       | դրանց,       |
| Բաց.  | սրանից,       | դրանից,       | սրանցից,     | դրանցից,     |
| Գործ. | սրանով,       | դրանով,       | սրանցով,     | դրանցով,     |
| Ներդ. | սրանում,      | դրանում,      | սրանցում,    | դրանցում,    |
| Հայց. | սրան,         | դրան,         | սրանց,       | դրանց,       |

12. Ցուցական, այս, այդ, այն, սոյն ևլ. գոյականի հետ վարուելներուն պատճառով չեն հոլովւում. այս գիրքը. այդ մարդը. այն տեսրակը, առանձին գործածուելուս էլի չեն հոլովւում, այս արա, այն վերան. ևլ :

13. Ստացական դերանունները եթէ գոյականի հետ են դրւում, միշտ անփոփոխ են մնում, չեն հոլովւում : Ի՞ գիրքը. ո՞ւ տները. նորո ձիերը. Նոր այդիներից. չեղ տներում. իբանց սենեակներով. չեղ ապարանքներով. ո՞ւ դասարանում ևլ :

14. Իսկ եթէ Ստացական դերանունները առանձին են գործ ածւում, այն ժամանակ հոլովւում են որոշեալ յօդով :

Առանց գոյականի

Եղակի

|       |        |         |         |
|-------|--------|---------|---------|
| Ուղ.  | իմը,   | քոնը,   | ձերը    |
| Սեռ.  | իմի(ն) | քոնի(ն) | ձերի(ն) |
| Տրակ. | իմին,  | քոնին,  | ձերին,  |
| Բաց.  | իմիցը, | քոնիցը, | ձերիցը, |
| Գործ. | իմովը, | քոնովը, | ձերովը, |
| Ներդ. | իմում, | քոնում, | ձերում, |
| Հայց. | իմին,  | քոնին,  | ձերին,  |

Յ ո գ ն ա կ ի

|     |                    |                      |                      |
|-----|--------------------|----------------------|----------------------|
| Ու. | իմերը (իմոնքը)     | քոները (քոնոնքը)     | ձերերը (ձերոնքը)     |
| Տ.  | իմերի (իմոնցը)     | քոներին (քոնոնցը)    | ձերերին (ձերոնցը)    |
| Բ.  | իմերից (իմոնցից)   | քոներից (քոնոնցից)   | ձերերից (ձերոնցից)   |
| Գ.  | իմերով (իմոնցով)   | քոներով (քոնոնցով)   | ձերերով (ձերոնցով)   |
| Ն.  | իմերում (իմոնցում) | քոներում (քոնոնցում) | ձերերում (ձերոնցում) |
| Հ.  | իմերին (իմոնցը)    | քոներին (քոնոնցը)    | ձերերին (ձերոնցը)    |

Գ ո յ ա կ ա ն ո վ

|     | Եղակի        | յոդնակի    | Եղակի       | յոդնակի       |
|-----|--------------|------------|-------------|---------------|
| Ու. | իւրը (իրանը) | իրանցը,    | մեր տունը,  | մեր տները,    |
| Տ.  | իրանի(ն)     | իրանցի,    | մեր տան,    | մեր տների,    |
| Բ.  | իրանին,      | իրանցին,   | մեր տանը,   | մեր տներին,   |
| Գ.  | իրանիցը,     | իրանցիցը,  | մեր տնիցը,  | մեր տներիցը,  |
| Ն.  | իրանովը,     | իրանցովը,  | մեր տնովը,  | մեր տներովը,  |
| Հ.  | իրանումը,    | իրանցումը, | մեր տնումը, | մեր տներումը, |
|     | իրանին,      | իրանցը,    | մեր տունը,  | մեր տները,    |

15. Ստացական գերանունները առանձին երկու ձևով են հոլովում, մէկը նշանակում է իմ ունեցածը : Օր. իմը, քոնը, ձերը, մերը, իւրը, ևլ. միւսը նշանակում է իմ ունեցածի(անձի) ունեցածը, որը կազմում է առաջինների սեռականից : Օր. իմինը, քոնինը, մերինը :

16. Ուս եթէ գոյականի հետ է չի հոլովում. եթէ առանձին է, հոլովում է : Օր. որ տունը, որ տնից, որ կողմերով ևլ. Եղակի որ, որի, որին, որից, որով, որի մէջ. Հայցական եթէ անձի տեղ է որին, եթէ անորոշէ, որ, յոդնակի, որոնք, որոնցից, որոնցով, որոնցում : Գոյականների երեք հոլովման պէս չհոլովող գերանունների բացառականը գործ. և ներգոյականը—կազմում են տրականից շատ անգամ հոլովացիչ

ածականների առաջ և տառն ընդունելով, ով, ում —ումնից, ումնով. ձեզ—ձեզնից, ձեզնով. դու, քեզ, քեզնով, քեզնում, քեզնից ևլ:

17. Անորոշ գերանունները եթէ գոյականի հետ են վարւում, չեն հոլովւում : Եթէ առանձին են գործածում, հոլովւում են :

Անորոշ գերանուններ  
եզակի

|     |          |          |            |           |            |
|-----|----------|----------|------------|-----------|------------|
| Ու. | ոչոք,    | ,        | ,          | միւսը,    | ուրիշը,    |
| Ս.  | ոչոքին,  | իրարու,  | մէկմէկու,  | միւսին,   | ուրիշին,   |
| Բ.  | ոչոքից,  | իրարուց, | մէկմէկուց, | միւսիցը,  | ուրիշիցը,  |
| Գ.  | ոչոքով,  | իրարով,  | մէկմէկով,  | միւսովը,  | ուրիշովը,  |
| Դ.  | ոչոքում, | իրարում, | մէկմէկում, | միւսումը, | ուրիշումը, |
| Հ.  | ոչոք,    | իրար,    | մէկմէկ     | միւսը,    | ուրիշը,    |

լոգնակի

|     |        |        |           |            |             |
|-----|--------|--------|-----------|------------|-------------|
| Ու. | չունի, | չունի, | չունի,    | միւսները,  | ուրիշները,  |
| Ու. | „      | „      | միւսներց, | միւսներին, | ուրիշներին, |
| ևլ: |        |        |           |            |             |

եզակի

|     |                 |             |          |
|-----|-----------------|-------------|----------|
| Ու. | իւրաքանչիւր,    | ամէն (ամեն) | ոչինչ,   |
| Ու. | իւրաքանչիւրի,   | ամէնի,      | ոչնչի,   |
| Տ.  | իւրաքանչիւրին)  | ամէնին)     | ոչնչին,  |
| Բ.  | իւրաքանչիւրից,  | ամէնից,     | ոչնչից,  |
| Գ.  | իւրաքանչիւրով,  | ամէնով,     | ոչնչով,  |
| Դ.  | իւրաքանչիւրում, | ամէնում,    | ոչնչում, |
| Հ.  | իւրաքանչիւր,    | ամէն,       | ոչինչ,   |

լոգնակի

|      |        |         |        |
|------|--------|---------|--------|
| Ու.  | չունի, | ամէնքը, | չունի, |
| Ու.  | „      | ամէնքի, | „      |
| ևլ : |        |         |        |

18. Անեղական է—ոմանք, ոմանց, ոմանցից, ոմանցով, ոմանց մէջ (ոմանցում) :

19. Ուրիշը, միւսը, ամէնքը, իւրեւ ստացական գործ են ածւում, ուրիշինի, միւսինի, ամէնքինի, ևլ. ուրիշներինից, միւսներինով, ամէնքինով ևլ :

20. Հարցական գերանուններից որը առանձին գործ է ածւում, հոլովւում է. գոյականի հետ չի հոլովւում: Օր. ի՞նչ մարդու, ի՞նչ մարդիկներ ևլ:

Հարցական դերանուններ.

Եղակի.

յոդնակի.

|     |          |         |           |           |
|-----|----------|---------|-----------|-----------|
| Ու. | մվ,      | բնչ,    | ովքել,    | բնչել,    |
| Ս.  | մւմ,     | բնչի,   | (որոնց)   | բնչերի,   |
| Բ.  | մւմնից,  | բնչից,  | (,,)      | բնչերին,  |
| Գ.  | մւմնով,  | բնչով,  | (որոնցից) | բնչերից,  |
| Ն.  | մւմնում, | բնչում, |           | բնչերում, |
| Հ.  | մւմ,     | բնչ,    |           | բնչեր,    |

21. Որակական և քանակական դերանունները գոյականի հետ չեն հոլովառում,  
իսկ առանձին հոլովառում են :

Ո ր ա կ ա կ ա ն ն ե ր

Ե զ ա կ ի

|       |          |           |          |
|-------|----------|-----------|----------|
| Ուղ.  | այսպիսի, | նոյնպիսի, | այնպիսի, |
| Սեռ.  | չունի,   | չունի,    | չունի,   |
| Տրակ. | "        | "         | "        |
| Բաց.  | "        | "         | "        |
| Գործ. | "        | "         | "        |
| Ներգ. | "        | "         | "        |
| Հայց. | "        | "         | "        |

Ի ո գ ն ա կ ի

|       |              |               |              |
|-------|--------------|---------------|--------------|
| Ուղ.  | այսպիսիներ,  | նոյնպիսիներ,  | այնպիսիներ,  |
| Ս. Ս. | այսպիսիների, | նոյնպիսիների, | այնպիսիների, |
|       | ևլ:          | ևլ:           | ևլ:          |

Ք ա ն ա կ ա կ ա ն ն ե ր

Ե զ ա կ ի

|      |            |             |             |                            |
|------|------------|-------------|-------------|----------------------------|
| Ուղ. | այսքան,    | նոյնքան,    | այսքաններ,  | (այսքանիներ) նոյնքաններ,   |
| Ս.   | այսքանի,   | նոյնքանի,   | այսքանների, | (այսքանիների) նոյնքանների, |
| Բ.   | այսքանից,  | նոյնքանից,  | ևլ.         | ևլ,                        |
| Գ.   | այսքանով,  | նոյնքանով,  | "           | "                          |
| Ն.   | այսքանում, | նոյնքանում, | "           | "                          |
| Հ.   | այսքան,    | նոյնքան,    | "           | "                          |

Ի ո գ ն ա կ ի

22. Մի քանի, մի քանիներ ևլ. հոլովառում է և այսպէս մի քանիսը, մի քանիսի, ից, ով ևլ. մի քանիսիներ, մի քանիսների, ից—ով ևլ :
23. Ստացական դերանունների տեղ ս. դ. ն. տառերը դրւում են գոյականների

վերջում, ցոյց են տալիս իրը ումն է : Փոխանակ ասելու իմ գիրքը, ասում  
ենք գիրքս. տետրակդ (քո տետրակլը) գրքերս (իմ գրքերը). գրքեներս (մեր  
գրքերը). գրքերդ (քո գրքերդ). գրքեներդ (նիդ) —ձեր գրքերը. գրքերնին  
(նրանց գրքերը). կրկնակի յոգնակիով : Ն—ը տառերը նոյն պաշտօնով եթէ  
վարում են, դժուարութեամբ են հասկացւում թէ նորա—ի տեղ են : Օր.  
ձին—իմ ձին, ձիդ—քո ձին, ձին—աւելի նշանակում է այն ձին իբրև որո-  
շեալ քան թէ նորա ձին. իսկ նախադասութեան մէջ հասկացւում է : Օր.  
իմ՝ ձին սատկեց—ալսինքն նրա ձին և ոչ այն :

24. Երբ գերանունները գոյականից առաջ են դրւում՝ նոցա հետ գործ են ած-  
ւում, այն ժամանակ շատ անդամ. ը—որոշեալ տառը դրւում է գոյականի  
վերջում : Օր. իմ գիրքը, քո տունը, մեր տները, և ոչ քո տուն, քո գիրք,  
մեր տներ ել :

Ե) Բ Ա Յ

1. Նախադասութեան մէջ մէկ առարկայ՝ մէկ գործող պիտի լինի որի վերայ  
խօսուի, բայց գրանից մի բան էլ պիտի՝ որ գործողի արածը, գործածը ցոյց  
տայ : Օր. ես գրում եմ. ես ժնում եմ. ով է գրում. ով է քնում—ես. եսը գոր-  
ծողն է, եսի վերայ է խօսում : Ես—ի համար ինչ է ասում. ասում է որ  
գրում է, ժնում է, ես—ի գործածը արածը—ժնելը գրելը է : Ես—ը կլինի գոր-  
ծողը, գրում եմ, ժնում եմ գործողութիւն ցոյց տուող բառերը :
2. Այն մասունք բանինները, որոնք գործողութիւն են ցոյց տալիս, կոչւում են  
բայեր : Շունը իերատ, կատուն չափանից, մուկը փախտա : Կերտա—ը շան գոր-  
ծողութիւնն է, չափանից կատուի, իսկ փախտաւը—մկան գործողութիւնը. իերատ,  
չափանից, փախտաւ—բայ են :
3. Բայերի գործողութիւնը կարող է կատարուել երկու առարկաների մէջ, այ-  
սինքն գործողութիւնը կտայ գործող առարկան միւս առարկային, կամ գոր-  
ծողը կ'ստանայ միւս առարկայից : Օր. Լեռնը գրում է դասը : Գործողու-  
թիւնն է գրելը, գրողը Լեռնն է, գրուողը դասը. գրելու համար պէտք է  
մէկը՝ որ գրի, և միւսը որ գրուի, այսինքն երկու առարկայ գրու և գրուուց  
Տաշելու համար հարկաւոր է տաշու և տաշուուց ծեծելու համար հարկաւոր  
է երկու առարկայ ծեծու և ծեծուուց : (ով կասի մի բառ, որի գործողութիւն  
կատարողը լինի երկու հոգի, երկու առարկայ . . . . ) :
4. Բայերի գործողութիւնը կարող է կատարուել միայն մի առարկայի մէջ և  
ուրիշ առարկայի վերայ չի անցնիլ : Օր Լեռնը ժնում է. գործողը—Լեռնն է.  
գործողութիւնը ժնելը, քնելու համար բայց Լեռնից էլ ուրիշ մի առարկայ  
հարկաւոր չէ. Լեռնը բաւական է. գործողութիւնը Լեռնից ոչ մէկի վերայ  
չ'անցկացաւ : Բայց եթէ ասեմ Լեռնը ժնում է հաց. մենակ որ Լեռնը լինի՝

Հաց չ'ինի, կարող է ուտել, ի հարկէ ո՞չ. բայցի Լևոնից հաց էլ է հարկաւոր ուտելու համար. այստեղ գործողութիւնը երկու առարկայի մէջ է կատարւում—Լևոնի և հայի: Մենք արդէն գիտենք, որ գործողը—ենթական է, գործողութիւն ցոյց տուող բառը ստորոգեալ, երկրորդ առարկան լրացուցիչը : Լևոնը ուտում է հաց. Լևոնը ենթակայ է, ուտում է—ստորոգեալ, հաց—լրացուցիչ :

5. Երբ գործողութիւնը երկու առարկայի մէջ է կատարւում, կարող է պատահել որ ենթական (գործողը) գործողութիւնը անց կացնի երկրորդ առարկայի վերականգնուցիչ վերայ : Օր. Պետրոսը խիեց ծառալին. Պետրոսը ենթակայ է, ծառան լրացուցիչ. խիեց—ն էլ գործողութիւն ցոյց տուող բառ. ով ձեռքը բարձրացրեց և տարաւ ծառալին խիեց.—Պետրոսը—ենթական. գործողութիւնը ենթակայից անցաւ երկրորդ առարկայի վերայ : (Ո՞վ կ'ասի մի ալգափիսի օրինակ) :
6. Երբ գործողութիւնը երկու առարկայի մէջ է կատարւում, կարող է գորահակառակը պատահել, որ երկրորդ առարկան գործողութիւնը անցկացնի ենթակայի վերայ : Օր. էշը ծեծուեց տիրոջից. ո՞րն է ենթական—էշը, ո՞րն է երկրորդ առարկան—տէրը, ծեծուեց—ն էլ գործողութիւնն է. ով է ծեծուեց—էշը, ենթական. ենթակային էշին ով է ծեծում, տէրը—երկրորդ առարկան. տիրոջից գործողութիւնը—ծեծը անցաւ էշի վերայ—ենթակայի վերայ : (Ո՞վ կասի մի ալսալիսի օրինակ . . . ևլ) :
7. Այն բայերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը գլխաւորից՝ ալսինքն ենթակայից անցնում է երկրորդականի ալսինքն լրացուցիչ վերայ, կոչւում են ներգործական : Օր. սոտել խմել գրեւ տաշել ևլ. ներգործական բայեր են :
8. Այն բայերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը անցնում է երկրորդական առարկայից գլխաւորի, ենթակայի վերայ, կոչւում են կրաւորական : Օր. սոտել է, խմառմ է, գրուեց է, տաշուեց ևլ :
9. Այն բայերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը ուրիշի վերայ չէ անցնում, հենց առարկայի մէջ է մնում, կոչւում են չչզոքական : Օր. նոտել, գնալ, ժնել յոգնել լուսել շրջել ևլ :
10. Բայերի այդ երեք տեսակը կոչւում է երեք սեռ, և հարցնուում է ինչ սեռի բայ է, ներգործական սեռի, կը. սեռի թէ . . . ևլ : Մնալ, խոստանալ, կարդացուել, խոստացուել, ասուել ևլ :

### Բայերի եղանակները

11. Բայերի ցոյց տուած գործողութիւնները զանազան ձևերով կարող են կատարուել. որոշակի, կասկածաւոր, թէականապէս, հրամայական ձևով. այդպիսի ձևերը կոչւում են եղանակներ : Օր. գնալ տուն (հրամայական ձև). պիտի

- գնայի պուն, ելեն անչըն չգտար, (պայմանական ձեւ է), ԱԵ որ գնամ պուն, չգտա (կասկածաւոր) — Ես գնամ էմ պուն (որոշակի) :
- | 12. Բայերի այն եղանակը, որը գործողութեան ոկզբնական ձեւն է, բայց գործութեան ոչ թիւը, ոչ ժամանակը և ոչ ով կարողն է ցոյց տալիս, կոչւում է Սնորոշ : Օր. ուստի ինչը գնաց երբ, ով և անյատ է :
- | 13. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ գործողութիւնը կատարւում է որոշ կերպով, որոշ սահմանով, առանց կասկածանքի, կոչւում է Սահմանական : Օր. Ես գնամ էմ, գրեցի, պիտի գրեմ ել :
- | 14. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ գործողութիւնը կատարւում է պայմանով, կոչւում է Պայմանական : Օր. Ես պիտի գնայի, եթէ անձըև չըգար. պիտի գնացած լինէի — եթէ . . . . :
- | 15. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ գործողութիւնը կասկածանքով, թէ ականապէս է կատարւում, կոչւում է Ստորադասական : Օր. ԱԵ որ գնամ — ինձ ծեծիր. ԱԵ որ գնայի. որ գնացած լինէմ ել :
- | 16. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը կատարւում է Հրամանի ձեռով, կոչւում է Հրամալական : Օր. Գնա՛ տուն, Ե՞լ մեղ մօտ, մի՛ գնաց ել :

Բայերի ժամանակը, դէմքը և թիւը :

- | 17. Ինչպէս ամէն գործողութիւն, նոյնպէս և բայերի գործողութիւնը կարող է կատարուել երեք ժամանակամիջոցում, կամ կատարուելիս, կամ կատարուած պըծած, կամ դեռ չկատարուած կարող է լինել : Օր. Ես գրում եմ (*այժմ*), Ես գրեցի (*անցեալ*), Ես պիտի գրեմ (*լետոյ*), (*Ո՞վ կասի մի օրինակ*) . . . . :
- | 18. Այն ժամանակը, որը ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը այժմ է կատարւում, կոչւում է ներկայ : Այն ժամանակը որը ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը կատարուել պըծել է, կոչւում է անցեալ : Այն ժամանակը, որ ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը պիտի դեռ նոր կատարուի, կոչւում է ապառնի : Խփեամ եմ (*ներկայ*). Խփեցի — անցեալ, պիտի խփեմ — ապառնի :
19. Բայերի գործողութիւնը կատարում է մէկը, ալդ մէկը, իրան համար ասում է Ես, ում հետ խօսում է, նրան ասում է ո՞ւ, ում վերայ խօսում է, նրան ասում է Կամ, Կամ մասին : Ես կլինի առաջի անձը — դէմքը, ո՞ւս (պէղ) կլինի երկրորդ անձը — դէմքը, Կամ Կամ կլինի երրորդ անձը՝ դէմքը :
20. Առաջին անձը՝ խօսողը — Ես կոչւում է առաջին դէմք. ԱԵս լոգնակի առաջին դէմք : Երկրորդ անձը՝ ո՞ւս կոչւում է երկրորդ դէմք. Ո՞ւս լոգնակի երկրորդ դէմք : Երրորդ անձը՝ Կոչւում է երրորդ դէմք. Կոչւում լոգնակի երրորդ դէմք :

21. Եթէ գործողութիւն կատարողը անչայտ է, այն ժամանակ ասում են բայր գործողից զրկուած է, դէմք չունի, դիմազուրկ է : Օր. որպատմ է, մըսում է, անչիւռում է, ցրտում է ևլ : Դէմք չունին, դիմազուրկ են :
22. Եթէ բայի գործողութիւն կատարողն է մէկը, այն ժամանակ ասում ենք գործողութիւնը եզակի է, իսկ եթէ գործողութիւն կատարողները շատ են, ասում ենք լոգնակի թուով գործողութիւն : Ես, դու, նո—ի գործողութիւնը եզակի է, մէկ, դուք, նոք—ի գործողութիւնը լոգնակի է, կատուն փախտա, մկները փախտան, նոքա եղան. Նա եղաւ. փախտա, եկաւ եզակի է, փախտան եղան—լոգնակի :

**Բայերի կազմութիւնը.**

23. Բայերը կազմութեան նայելով բաժանում են երեքի, պարզ, բարդ և ածանցեալ : Գործել իտու—ու—լարել, սովորյնել :
24. Պարզ կոչւում են այն բայերը, որոնց արմատի վերայ աւելացած է բայացուցիչ ածանց—ու և ել : Ա.՝—ել, իֆ—ել, գործ—ել, մո—ու, իտու—ու պարզ բայեր են :
25. Բարդ կոչւում են այն բայերը, որոնք երկու կամ աւելի արմատից են բաղկացած. իտու—ու—լարել, երի—փեղիւլ, սրբնեղիւլ հանել դաշ, իոժ անել ևլ :
26. Ածանցական բայերը նոքա են կոչւում, որոնց արմատի և ածանցի մէջ դըրւում են մասնիկներ և տառեր. գտ—ն—ել, մտ—յն—ել, ծեր—ոն—ալ, կոտր—ոտ—ել ևլ :
27. Բայացուցիչ ածանցները—ել ալ (երբեմն իլ) կոչւում են Լծորդներ : Իսկ բայերի վերջաւորութեան փոփօխութիւնը խոնարհումն : Խոնարհումները լինում են եղանակներով, թուով և դէմքերով :
28. Խոնարհումները լինում են գերբայներով և առանց գերբայների : Դերբայներով խոնարհումները բազագրեալ են, առանց գերբայների պարզ :
29. Դերբայները՝ բայերի այն ձևերն են, որոնք կազմւում են, ել կամ ալ աշ, ած, լու ածանցներով. խօս—ել խօսած, խօսուշ, խօսալու. սրանցով կազմւում են բայերի բազագրեալ ժամանակները :
30. Բայերի խոնարհումն առանց գերբայների շատ պարզ ձև ունի և է այս :

**Ներկայ ժամանակ.**

**Եզակի**

**լոգնակի**

գործում եմ.

գործում ենք.

գործում ես.

գործում էք.

գործում է.

գործում են.

**Անցեալ անկատար.**

գործում էի.

գործում էինք.

գործում էիր.

գործում էիք.

գործում էր.

գործում էին.

Անցեալ կատարեալ.

Եղակի

գործեցի.

գործեցիր.

գործեց.

պիտի գործեմ (կ' գործեմ)

,, գործես.

,, գործի(է).

ովիտի գործէի.

,, գործէիր.

,, գործէր.

թէ որ գործեմ.

,, գործես.

,, գործի(է)

թէ որ գործէի.

,, գործէիր.

,, գործէր.

գործիր, մի գործիր.

Ապառնի ժամանակ.

պիտի գործենք (կ' գործենք)

,, գործէք.

,, գործեն.

Պալմանական եղանակ

պիտի գործէինք.

,, գործէիրք.

,, գործէին.

Ստորադասական եղանակ.

որ գործենք.

,, գործէք.

,, գործեն.

Ստորադասական անցեալ.

որ գործէինք.

,, գործէիրք.

,, գործէին.

Հրամայական եղանակ.

գործեցէք, մի գործէք.

31. Ներկայ և անցեալ անկատարի ցուցիչ ածանցն է ում, որը գոյականների ում—նշանիկն է. գործ—ում էի (անցեալ անկատար) այսինքն գործելու հեջ եմ, գործելու հեջ էի :
32. Պարզ խոնարհման անցեալն երկու է՝ կատարեալ և անկատար. անկատարը այն անցեալ ժամանակն է, որ ցոյց է տալիս թէ բայի գործողութիւնը թէև անցել է բայց չի վերջացել. իսկ կատարեալը այն անցեալն է, որ ցոյց է տալիս թէ բայի գործողութիւնը անցել վերջացել է : Օր. խուամ էի, խեցի, նստած էի, նստեցի ևլ. խուամ էի, նստեց էի—անկ. խեցի, նստեցի—կատարեալ :
33. Իսկ անցեալ գերբայով կազմուած անցեալ ժամանակները 8-են, յարակատարներ, վաղակատարներ գերակատարները: Յարակատար ժամանակը անցեալ կատարեալ է—տւելի շուտ կատարուած քան կատարեալը. վաղակատարը աւելի շուտ կատարուած քան յարակատարը : Գերակատար ժամանակը աւելի վաղ կատարուած քան վաղակատարը : Յարակատարը և վաղակատարը, շատ ժամանակ միմեանց փոխարէն գործ են ածւում առանց զգալի տարբերութեան : Տեսած էմ, տեսած էմ լինում, տեսած էի յարակատար. տեսած եմ եղել, տեսած էի եղել, գերակատար. տեսել էմ, տեսել էի, վաղակատար :

34. Ապառնի գերբայով կազմւում են բաղադրեալ ժամանակներ, որոնք հարկադրական նշանակութիւն ունին : Տեսնելու եմ, աւանելու եկ, աւանելու որ լինեմ, աւանելու որ լինեմ :
35. Անորոշ գերբայի ներգոյականով և լինել օժանդակ բայով կազմւում են բազմաթիւ ժամանակներ. աւանելու եմ լինում, աւանելու եմ եզել ևլ :
36. Բայերը ունեն երկու լծորդութիւն ել ևալ լւ—ը շատ քիչ է լինում, միայն բացասական բայերի խոնարհման մէջ է գործածւում. ել—լծորդութեան բայերը խոնարհման մէջ պահում են ե—տառը. ալ—լծորդութեան բայերը— տառը : Առաջինի կատարեալը—լինում է եցի, երկրորդինը—այսի, իսկ ածանցական բայերում ն—չ—տառեր ունեցողների կատարեալը այսոյ—այ է վերջանում, կարդալ—կարդայի, գործել—գործեյի, գտնել—գտայ, խոստանալ—խոստայայ :
37. Բայերի լծորդութիւնը կլինեն—ել ալ և խառն—(ն—ալ և ն—ել) : Որոնք տարբերում են գլխաւորապէս կատարեալով :

ա). ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ—ԵԼ.

Սահմանական եղանակ. ԵԼ—ԲԱՅԻ

Ներկայ ժամանակ.

անցեալ անկատար.

Ե Ղ Ա Կ Ի

|     |    |
|-----|----|
| ԵՍ  | ԵՄ |
| ԴՈՒ | ԵԱ |
| ՆԱ  | Է  |

|     |     |
|-----|-----|
| ԵՍ  | ԷԻ  |
| ԴՈՒ | ԷՒԾ |
| ՆԱ  | ԷՐ  |

Լ Ո Գ Ն Ա Կ Ի

|      |     |
|------|-----|
| ՃԵՆՔ | ԵՆՔ |
| ԴՈՒՔ | ԵՔ  |
| ՆՈՔԱ | ԵՆ  |

|      |      |
|------|------|
| ՃԵՆՔ | ԷՒՆՔ |
| ԴՈՒՔ | ԷՒՔ  |
| ՆՈՔԱ | ԷՒՆ  |

38. Ել չեռք բայլը ուրիշ ժամանակներ չունի : Ես լինել կալ—չեզոք բայերը կոչւում են օժանդակ բայեր, որովհետեւ ուրիշ բայերի հետ միանալով իրեւ օգնականներ զանազան ժամանակներ են կազմել տալիս :



ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՐԱԿ (ԼԻՆԵԼ)

Ներկայ ժամանակ

անցեալ անկատար

անցեալ կատարեալ

ե զ ա կ ի

ես լինում եմ

ես լինում էի

ես եղայ

դու լինում ես

դու լինում էիր

դու եղար

նա լինում է

նա լինում էր

նա եղաւ

լ ո գ ն ա կ ի

մենք լինում ենք

մենք լինում էինք

մենք եղանք

դուք լինում էք

դուք լինում էիք

դուք եղաք

նոքա լինում են

նոքա լինում էին

նոքա եղան

Յարակատար

Յարակատար անցեալ

Վաղակատար

ե զ ա կ ի

ես եղած եմ

ես եղած էի

ես եղել եմ

դու եղած ես

դու եղած էիր

դու եղել ես

նա եղած է

նա եղած էր

նա եղել է

լ ո գ ն ա կ ի

մենք եղած ենք

մենք եղած էինք

մենք եղել ենք

դուք եղած էք

դուք եղած էիք

դուք եղել էք

նոքա եղած են

նոքա եղած էին

նոքա եղել են

Վաղակատար անցեալ

Ապառնի ներկայ

Ապառնի անցեալ

ե զ ա կ ի

ես եղել էի

պիտի լինեմ (կ'լինեմ)

պիտի եղած լինեմ

(եղ. կ'լինեմ)

դու եղել էիր

պիտի լինես

պիտի եղած լինես

”

նա եղել էր

պիտի լինի(է)

պիտի եղած լինի(է)

”

լ ո գ ն ա կ ի

մենք եղել էինք

պիտի լինենք

պիտի եղած լինենք

”

դուք եղել էիք

պիտի լինէք

պիտի եղած լինէք

”

նոքա եղել էին

պիտի լինեն

պիտի եղած լինեն

”

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵԿԱՐ

անցեալ

|             |             |              |                |                  |              |             |              |              |                 |
|-------------|-------------|--------------|----------------|------------------|--------------|-------------|--------------|--------------|-----------------|
| <b>Եղ.</b>  | <b>Ես</b>   | <b>ալիտի</b> | <b>լինէի</b>   | <b>(կ'լինէի)</b> | <b>ալիտի</b> | <b>եղած</b> | <b>լինէի</b> | <b>(եղած</b> | <b>կ'լինէի)</b> |
|             | <b>դու</b>  | <b>ալիտի</b> | <b>լինէիր</b>  |                  |              |             | <b>ալիտի</b> | <b>եղած</b>  | <b>լինէիր</b>   |
|             | <b>նա</b>   | <b>ալիտի</b> | <b>լինէլ</b>   |                  |              |             | <b>ալիտի</b> | <b>եղած</b>  | <b>լինէլ</b>    |
| <b>լոգ.</b> | <b>մենք</b> | <b>ալիտի</b> | <b>լինէինք</b> |                  |              |             | <b>ալիտի</b> | <b>եղած</b>  | <b>լինէինք</b>  |
|             | <b>դուք</b> | <b>ալիտի</b> | <b>լինէիք</b>  |                  |              |             | <b>ալիտի</b> | <b>եղած</b>  | <b>լինէիք</b>   |
|             | <b>նոքա</b> | <b>ալիտի</b> | <b>լինէին</b>  |                  |              |             | <b>ալիտի</b> | <b>եղած</b>  | <b>լինէին</b>   |

## ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

## ՆԵՐԿԱՅԻ անցեալ անկատար

## ՆԵՐԿԱՅԻ անգեալ անկատար

|     |         |       |     |      |        |      |        |        |      |    |         |
|-----|---------|-------|-----|------|--------|------|--------|--------|------|----|---------|
| Եղ. | որ      | լինեմ | ես  | (որ) | լինէի  | Յոդ. | որ     | լինենք | մենք | որ | լինէինք |
| "   | լինես   |       | դու | "    | լինէիր | "    | լինէիք |        | դուք | "  | լինէիք  |
| "   | լինի(է) |       | նա  | "    | լինէր  | "    | լինեն  |        | նոքա | "  | լինէին  |

## Յարակատար Վաղակատար Յարակատար Վաղակատար

Եզ. որ եղած լինեմ որ եղած լինէի լոգ. որ եղած լինենք որ եղած լինէինք  
,, եղած լինես ,, եղած լինէիը ,, եղած լինէք ,, եղած լինէիք  
,, եղած լինի(է) ,, եղած լինէր ,, եղած լինեն ,, եղած լինէին

## ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

**Եղակի. Եղիքը (դու), մի լինիր.**

լոգնակի. Եղեք, մի լինեք :

Անորոշ գերբալ—լինել, Ներկալ—լինող—եղող, Անցեալ գերբալ—եղած, եղել, Այսանի—լինելու :

39. Կանոնի համաձայն երրորդ դէմքը պիտի լինի—լինէ (լինեմ, լինես, լինէ): Ե—տառը փոխւում է է—ի, բայց գործ են ածում մինի. Ե մօսում է և է—ի.

40. Ապառնի ժամանակը երկու ձևովէ լինում, մէկը պիտի—ով, միւսը է՛—ով :

41. Անցեալ գերբայները երկու վերջաւորութիւն ունեն ած և էլ 0ր. կարդալ, անցեալ գերբայը կլինի կարդացած և կարդացէլ խօսել-խօսած և խօսել ել:

Ա. Խորդութիւն—Ել.

## 6. *Ізопропілідієн*—УЛ.

### ԱՎԵՐԿԱՆԸՆՔՆ - ԵԶ ԱՆՌԻ

## ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿԻ

|            |            |              |           |              |           |
|------------|------------|--------------|-----------|--------------|-----------|
| <i>եղ.</i> | <i>ես</i>  | <i>գրում</i> | <i>եմ</i> | <i>մնում</i> | <i>եմ</i> |
|            | <i>դու</i> | <i>գրում</i> | <i>ես</i> | <i>մնում</i> | <i>ես</i> |
|            | <i>նա</i>  | <i>գրում</i> | <i>է</i>  | <i>մնում</i> | <i>է</i>  |

լոդ. մենք գրում ենք մնում ենք  
դուք գրում եք մնում եք  
նորա գրում են մնում են

*անցեալ անկատար*

|     |           |           |      |            |            |
|-----|-----------|-----------|------|------------|------------|
| Եզ. | գըում էի  | մնում էի  | լոդ. | գըում էինք | մնում էինք |
|     | գըում էիր | մնում էիր |      | գըում էիք  | մնում էիք  |
|     | գըում էր  | մնում էր  |      | գըում էին  | մնում էին  |

*անցեալ կատարեալ*

|     |        |        |      |         |         |
|-----|--------|--------|------|---------|---------|
| Եզ. | գըեցի  | մնացի  | լոդ. | գըեցինք | մնացինք |
|     | գըեցիր | մնացիր |      | գըեցիք  | մնացիք  |
|     | գըեց   | մնաց   |      | գըեցին  | մնացին  |

*յարակատար*

|     |         |           |      |          |            |
|-----|---------|-----------|------|----------|------------|
| Եզ. | գրած եմ | մնացած եմ | լոդ. | գրած ենք | մնացած ենք |
|     | գրած ես | մնացած ես |      | գրած էք  | մնացած էք  |
|     | գրած է  | մնացած է  |      | գրած են  | մնացած են  |

\* *յարակատար ներկայ*

|         |                 |                   |
|---------|-----------------|-------------------|
| Եզակի   | գրած եմ լինում  | մնացած եմ լինում  |
|         | գրած ես լինում  | մնացած ես լինում  |
|         | գրած է լինում   | մնացած է լինում   |
| լոգնակի | գրած ենք լինում | մնացած ենք լինում |
|         | գրած էք լինում  | մնացած էք լինում  |
|         | գրած են լինում  | մնացած են լինում  |

*յարակատար անցեալ*

|     |          |            |      |           |             |
|-----|----------|------------|------|-----------|-------------|
| Եզ. | գրած էի  | մնացած էի  | լոդ. | գրած էինք | մնացած էինք |
|     | գրած էիր | մնացած էիր |      | գրած էիք  | մնացած էիք  |
|     | գրած էր  | մնացած էր  |      | գրած էին  | մնացած էին  |

\* Սա ունի և իւր անկատար ձևը, որը քեզ գործածական է :

*անկատար ձև*

|         |                  |                    |
|---------|------------------|--------------------|
| Եզակի   | գրած էի լինում   | մնացած էի լինում   |
|         | գրած էիր լինում  | մնացած էիր լինում  |
|         | գրած էր լինում   | մնացած էր լինում   |
| լոգնակի | գրած էինք լինում | մնացած էինք լինում |
|         | գրած էիք լինում  | մնացած էիք լինում  |
|         | գրած էին լինում  | մնացած էին լինում  |

**վաղակատար**

**եղակի**

**լոգնակի**

գրել եմ մնացել եմ  
գրել ես մնացել ես  
գրել է մնացել է

գրել ենք մնացել ենք  
գրել էք մնացել էք  
գրել են մնացել են

**վաղակատար անցեալ**

**եղակի**

**լոգնակի**

գրել էի մնացել էի  
գրել էիր մնացել էիր  
գրել էր մնացել էր

գրել էինք մնացել էինք  
գրել էիք մնացել էիք  
գրել էին մնացել էին

**գերակատար**

**եղակի**

**լոգնակի**

գրած եմ եղել մնացած եմ եղել  
գրած ես եղել մնացած ես եղել  
գրած է եղել մնացած է եղել

գրած ենք եղել մնացած ենք եղել  
գրած էք եղել մնացած էք եղել  
գրած են եղել մնացած են եղել

**գերակատար անցեալ**

**եղակի**

**լոգնակի**

գրած էի եղել մնացած էի եղել  
գրած էիր եղել մնացած էիր եղել  
գրած էր եղել մնացած էր եղել

գրած էինք եղել մնացած էինք եղել  
գրած էիք եղել մնացած էիք եղել  
գրած էին եղել մնացած էին եղել

**ապառնի ներկայ**

**եղակի**

**լոգնակի**

պիտի գրեմ (կ'գրեմ) պիտի մնամ (կ'մնամ)  
պիտի գրես պիտի մնաս  
պիտի գրէ(ի) պիտի մնայ

պիտի գրենք պիտի մնանք  
պիտի գրէք պիտի մնաք  
պիտի գրեն պիտի մնան

**ապառնի անցեալ**

**եղակի** պիտի գրած լինեմ (գրած կ'լինեմ)  
պիտի գրած լինես  
պիտի գրած լինի (է)  
**լոգնակի** պիտի գրած լինենք  
պիտի գրած լինէք  
պիտի գրած լինեն

պիտի մնացած լինեմ  
պիտի մնացած լինես  
պիտի մնացած լինի  
պիտի մնացած լինենք  
պիտի մնացած լինէք  
պիտի մնացած լինեն

*ապառնի Հարկադրական*

*եղակի*

*լոգնակի*

գրելու եմ  
գրելու ես  
գրելու է

մնալու եմ  
մնալու ես  
մնալու է

գրելու ենք  
գրելու էք  
գրելու են

մնալու ենք  
մնալու էք  
մնալու են

*ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ*

*ն ե ր կ ա յ*

*եղակի*

*լոգնակի*

պիտի գրէի (կ'գրէի) պիտի մնալի (կ'մնալի)  
պիտի գրէիր պիտի մնալիր  
պիտի գրէր

պիտի գրէինք պիտի մնալինք  
պիտի գրէիք պիտի մնալիք  
պիտի գրէին պիտի մնալին

*ա ն ց ե ա լ*

եղակի պիտի գրած լինէի (գրած կ'լինէի)  
պիտի գրած լինէիր  
պիտի գրած լինէր  
լոգնակի պիտի գրած լինէինք  
պիտի գրած լինէիք  
պիտի գրած լինէին

պիտի մնացած լինէի  
պիտի մնացած լինէիր  
պիտի մնացած լինէր  
պիտի մնացած լինէինք  
պիտի մնացած լինէիք  
պիտի մնացած լինէին

*Հարկադրական*

*եղակի*

*լոգնակի*

գրելու էի  
գրելու էիր  
գրելու էր

գրելու էինք  
գրելու էիք  
գրելու էին

*ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ*

*ներկայ*

*անցեալ անկատար*

եղակի որ գրեմ որ մնամ  
                գրես  
                գրէ(ի)  
լոգնակի գրենք մնանք  
                գրէք  
                գրեն

որ գրէի որ մնալի  
գրէիր մնալիր  
գրէր մնար  
գրէինք մնալինք  
գրէիք մնալիք  
գրէին մնալին

*Հարակատար*

*եղակի*

*լոգնակի*

|               |                 |                |                  |
|---------------|-----------------|----------------|------------------|
| որ գրած լինեմ | որ մնացած լինեմ | որ գրած լինենք | որ մնացած լինենք |
| գրած լինես    | մնացած լինես    | գրած լինէք     | մնացած լինէք     |
| գրած լինի(է)  | մնացած լինի(է)  | գրած լինեն     | մնացած լինեն     |

*վաղակատար*

*եղակի*

*լոգնակի*

|               |                 |                 |                   |
|---------------|-----------------|-----------------|-------------------|
| որ գրած լինէի | որ մնացած լինէի | որ գրած լինէինք | որ մնացած լինէինք |
| գրած լինէիր   | մնացած լինէիր   | գրած լինէիք     | մնացած լինէիք     |
| գրած լինէր    | մնացած լինէր    | գրած լինէին     | մնացած լինէին     |

*Հարկադրական ներկայ*

*եղակի*

*լոգնակի*

|                 |                 |                  |                  |
|-----------------|-----------------|------------------|------------------|
| որ գրելու լինեմ | որ մնալու լինեմ | որ գրելու լինենք | որ մնալու լինենք |
| ,, լինես        | ,, լինես        | ,, լինէք         | ,, լինէք         |
| ,, լինի         | ,, լինի         | ,, լինեն         | ,, լինեն         |

*Հարկադրական անցեալ*

*եղակի*

*լոգնակի*

|                 |                 |                   |                   |
|-----------------|-----------------|-------------------|-------------------|
| որ գրելու լինէի | որ մնալու լինէի | որ գրելու լինէինք | որ մնալու լինէինք |
| ,, լինէիր       | ,, լինէիր       | ,, լինէիք         | ,, լինէիք         |
| ,, լինէր        | ,, լինէր        | ,, լինէին         | ,, լինէին         |

*ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ*

*եղակի*

*լոգնակի*

|               |               |                 |                 |
|---------------|---------------|-----------------|-----------------|
| գրիր, մի գրիր | մնա՛, մի մնար | գրեցէք, մի գրէք | մնացէք, մի մնաք |
|---------------|---------------|-----------------|-----------------|

*անորոշ գերբայ*

*անցեալ գերբայ*

*դրել մնալ*

*գրած—դրել մնացած—մնացէլ*

*ներկայ*

*ապառնի*

*գրող մնացող*

*գրելու մնալու*



Գ—խառն լծորդութիւն—ն—ԱԼ և ն—ԵԼ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԻԿԱՅ ԺԱՄԱՆԱԿ

Եղակի

լոգնակի

|            |           |             |            |
|------------|-----------|-------------|------------|
| իմանում եմ | գտնում եմ | իմանում ենք | գտնում ենք |
| իմանում ես | գտնում ես | իմանում եք  | գտնում եք  |
| իմանում է  | գտնում է  | իմանում են  | գտնում են  |

անցեալ անկատար

Եղակի

լոգնակի

|             |            |              |             |
|-------------|------------|--------------|-------------|
| իմանում էի  | գտնում էի  | իմանում էինք | գտնում էինք |
| իմանում էիր | գտնում էիր | իմանում էիր  | գտնում էիր  |
| իմանում էր  | գտնում էր  | իմանում էին  | գտնում էին  |

անցեալ կատարեալ

Եղակի

լոգնակի

|        |      |         |       |
|--------|------|---------|-------|
| իմացալ | գտայ | իմացանք | գտանք |
| իմացար | գտար | իմացաք  | գտաք  |
| իմացաւ | գտաւ | իմացան  | գտան  |

յարակատար

Եղակի

լոգնակի

|           |         |            |          |
|-----------|---------|------------|----------|
| իմացած եմ | գտած եմ | իմացած ենք | գտած ենք |
| իմացած ես | գտած ես | իմացած եք  | գտած եք  |
| իմացած է  | գտած է  | իմացած են  | գտած են  |

յարակատար — ներկայ †

Եղակի

լոգնակի

|                                 |                                   |
|---------------------------------|-----------------------------------|
| իմացած եմ լինում գտած եմ լինում | իմացած ենք լինում գտած ենք լինում |
| իմացած ես լինում գտած ես լինում | իմացած եք լինում գտած եք լինում   |
| իմացած է լինում գտած է լինում   | իմացած են լինում գտած են լինում   |

յարակատար — անցեալ

Եղակի

լոգնակի

|            |          |             |           |
|------------|----------|-------------|-----------|
| իմացած էլ  | գտած էլ  | իմացած էինք | գտած էինք |
| իմացած էլը | գտած էլը | իմացած էիր  | գտած էիր  |
| իմացած էր  | գտած էր  | իմացած էին  | գտած էին  |

### վաղակատար

եղակի

լոգնակի

|           |         |
|-----------|---------|
| իմացել եմ | գտել եմ |
| իմացել ես | գտել ես |
| իմացել է  | գտել է  |

|            |          |
|------------|----------|
| իմացել ենք | գտել ենք |
| իմացել էք  | գտել էք  |
| իմացել են  | գտել են  |

† Սա ունի և իւր անկատար ձեւը, որը քիչ գործածական է :

### անկատար ձեւ

եղակի

լոգնակի

|                   |                 |                    |                  |
|-------------------|-----------------|--------------------|------------------|
| իմացած էի լինում  | գտած էի լինում  | իմացած էինք լինում | գտած էինք լինում |
| իմացած էիր լինում | գտած էիր լինում | իմացած էիք լինում  | գտած էիք լինում  |
| իմացած էր լինում  | գտած էր լինում  | իմացած էին լինում  | գտած էին լինում  |

### վաղակատար — անցեալ

եղակի

լոգնակի

|            |          |
|------------|----------|
| իմացել էի  | գտել էի  |
| իմացել էիր | գտել էիր |
| իմացել էր  | գտել էր  |

|             |           |
|-------------|-----------|
| իմացել էինք | գտել էինք |
| իմացել էիք  | գտել էիք  |
| իմացել էին  | գտել էին  |

### գերակատար

եղակի

լոգնակի

|                |              |                 |               |
|----------------|--------------|-----------------|---------------|
| իմացած եմ եղել | գտած եմ եղել | իմացած ենք եղել | գտած ենք եղել |
| իմացած ես եղել | գտած ես եղել | իմացած էք եղել  | գտած էք եղել  |
| իմացած է եղել  | գտած է եղել  | իմացած են եղել  | գտած են եղել  |

### գերակատար անցեալ

եղակի

լոգնակի

|                 |               |                  |                |
|-----------------|---------------|------------------|----------------|
| իմացած էի եղել  | գտած էի եղել  | իմացած էինք եղել | գտած էինք եղել |
| իմացած էիր եղել | գտած էիր եղել | իմացած էիք եղել  | գտած էիք եղել  |
| իմացած էր եղել  | գտած էր եղել  | իմացած էին եղել  | գտած էին եղել  |

### ապառնի — ներկայ

եղակի

լոգնակի

|              |               |
|--------------|---------------|
| ալիտի իմանամ | ալիտի գտնեմ   |
| ալիտի իմանաս | ալիտի գտնես   |
| ալիտի իմանալ | ալիտի գտնէ(ի) |

|               |              |
|---------------|--------------|
| ալիտի իմանանք | ալիտի գտնենք |
| ալիտի իմանաք  | ալիտի գտնէք  |
| ալիտի իմանան  | ալիտի գտնեն  |

**ապառնի — անցեալ**

**Եղակի**

**լոգնակի**

|                   |                 |                    |                  |
|-------------------|-----------------|--------------------|------------------|
| պիտի իմացած լինեմ | պիտի գրած լինեմ | պիտի իմացած լինենք | պիտի գրած լինենք |
| պիտի իմացած լինես | պիտի գրած լինես | պիտի իմացած լինէք  | պիտի գրած լինէք  |
| պիտի իմացած լինի  | պիտի գրած լինի  | պիտի իմացած լինեն  | պիտի գրած լինեն  |

**ապառնի Հարկադրական**

\* **Եղակի**

**լոգնակի**

|             |            |              |             |
|-------------|------------|--------------|-------------|
| իմանալու եմ | գտնելու եմ | իմանալու ենք | գտնելու ենք |
| իմանալու ես | գտնելու ես | իմանալու էք  | գտնելու էք  |
| իմանալու է  | գտնելու է  | իմանալու են  | գտնելու են  |

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

**ՆԵՐԿԱՅ**

**Եղակի**

**լոգնակի**

|               |             |                |              |
|---------------|-------------|----------------|--------------|
| պիտի իմանալի  | պիտի գտնէի  | պիտի իմանալինք | պիտի գտնէինք |
| պիտի իմանալիր | պիտի գտնէիր | պիտի իմանալիք  | պիտի գտնէիք  |
| պիտի իմանար   | պիտի գտնէր  | պիտի իմանալին  | պիտի գտնէին  |

**անցեալ**

**Եղակի**

**լոգնակի**

|                   |                 |                     |                   |
|-------------------|-----------------|---------------------|-------------------|
| պիտի իմացած լինէի | պիտի գտած լինէի | պիտի իմացած լինէինք | պիտի գտած լինէինք |
| ,, իմացած լինէիր  | ,, գտած լինէիր  | ,, իմացած լինէիք    | ,, գտած լինէիք    |
| ,, իմացած լինէր   | ,, գտած լինէր   | ,, իմացած լինէին    | ,, գտած լինէին    |

**Հարկադրական**

**Եղակի**

**լոգնակի**

|              |             |               |              |
|--------------|-------------|---------------|--------------|
| իմանալու էի  | գտնելու էի  | իմանալու էինք | գտնելու էինք |
| իմանալու էիր | գտնելու էիր | իմանալու էիք  | գտնելու էիք  |
| իմանալու էր  | գտնելու էր  | իմանալու էին  | գտնելու էին  |

**ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

**ՆԵՐԿԱՅ**

**Եղակի**

**լոգնակի**

|           |          |            |           |
|-----------|----------|------------|-----------|
| որ իմանամ | որ գտնեմ | որ իմանանք | որ գտնենք |
| իմանաս    | գտնես    | իմանաք     | գտնէք     |
| իմանալ    | գտնէ(ի)  | իմանան     | գտնեն     |

**անցեալ անկատար  
եղակի**

լոգնակի

|          |        |           |         |
|----------|--------|-----------|---------|
| իմանալի  | գտնէի  | իմանալինք | գտնէինք |
| իմանալիք | գտնէիք | իմանալիք  | գտնէիք  |
| իմանար   | գտնէր  | իմանալին  | գտնէին  |

**յարտկատար**

եղակի

լոգնակի

|                 |               |                  |                |
|-----------------|---------------|------------------|----------------|
| որ իմացած լինեմ | որ գտած լինեմ | որ իմացած լինենք | որ գտած լինենք |
| ,, լինես        | ,, լինես      | ,, լինէք         | ,, լինէք       |
| ,, լինի(է)      | ,, լինի(է)    | ,, լինեն         | ,, լինեն       |

**վաղակատար**

եղակի

լոգնակի

|                 |               |                   |                 |
|-----------------|---------------|-------------------|-----------------|
| որ իմացած լինէի | որ գտած լինէի | որ իմացած լինէինք | որ գտած լինէինք |
| ,, լինէիք       | ,, լինէիք     | ,, լինէիք         | ,, լինէիք       |
| ,, լինէր        | ,, լինէր      | ,, լինէին         | ,, լինէին       |

**չարկադրական ներկայ**

եղակի

լոգնակի

|                   |                  |                    |                   |
|-------------------|------------------|--------------------|-------------------|
| որ իմանալու լինեմ | որ գտնելու լինեմ | որ իմանալու լինենք | որ գտնելու լինենք |
| ,, լինես          | ,, լինես         | ,, լինէք           | ,, լինէք          |
| ,, լինի           | ,, լինի          | ,, լինեն           | ,, լինեն          |

**չարկադրական անցեալ**

եղակի

լոգնակի

|                   |                  |                     |                    |
|-------------------|------------------|---------------------|--------------------|
| որ իմանալու լինէի | որ գտնելու լինէի | որ իմանալու լինէինք | որ գտնելու լինէինք |
| ,, լինէիք         | ,, լինէիք        | ,, լինէիք           | ,, լինէիք          |
| ,, լինէր          | ,, լինէր         | ,, լինէին           | ,, լինէին          |

**ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

|         |                    |                |
|---------|--------------------|----------------|
| եղակի   | իմացիր, մի՛ իմանար | գտիր մի՛ գտնիր |
| լոգնակի | իմացէք, մի՛ իմանաք | գտէք մի՛ գտնէք |

**անորոշ դերբայ**

|        |       |               |           |
|--------|-------|---------------|-----------|
| իմանալ | գտնել | իմացած—իմացել | գտած—գտել |
|--------|-------|---------------|-----------|

**ներկայ**

ապառնի

|        |       |          |         |
|--------|-------|----------|---------|
| իմացող | գտնող | իմանալու | գտնելու |
|--------|-------|----------|---------|



42. Ա. լծորդութեան վերայ խոնարհւում են, խմել, հանել, ազատել, ուզել, բռնել, սպանել, կանչել, աշխատել, ապրել, հաւանել, նստել, պառկել, համարել, նայել, խօսել, ամաչել ել :
- Բ. լծորդութեան պէս խոնարհւում են, կարդալ, աղալ, խաղալ ել :
- Գ. լծորդութեան վերայ բացի—ն—ածանցական տառից և—չ—տառով բայերը են խոնարհւում. թռչել, փախչել, դպչել, կպչել, տեսնել, մտնել, հագնել, մեռնել, անցնել, բուսնել, հասնել, իջնել, հեծնել, մոռանալ, խոստանալ, հասկանալ, դառնալ, գոլանալ, վախենալ ել :
43. Բուն հրամայականը կազմւում է կատարեալի եզակի և լոգնակի բ—դէմքերից, իսկ արգելական հրամայականը ստորադասականի եզակի և լոգնակի բ—դէմքերից : (ընթաց հրամայականը, կատարեալը և ստորադասականը, համեմատիր և կազմիր) :
44. Նաև և ալ վերջացող բայերից եթէ ուղում ենք կրաւորական կազմել, պիտի անցեալ ել վերջ. գերբայի սկզբից ու աւելացնենք. իսկ նէլ—ել վերջացողներից կը. կազմելու համար, պիտի անորոշ գերբայի ել—ից առաջ ու աւելացնել : իմանալ—անցեալ գերբայ—իմայել, կրաւորական իմայուել, կարդալ—անցեալ գերբայ—իմարտացնել, կրաւորական իմարտացնել . Դրել կրաւորական գրաւել. գտնել—գտնուել :
45. Բոլոր կրաւորական բայերը իբրև ուել վերջացող խոնարհւում են ա—լծորդութեան պէս, իսկ շատ անգամ և գ—ի պէս :

### Կրաւորականների խոնարհումը

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ. գրւում եմ, իմացւում եմ, գտնուում եմ, համարւում եմ :

Անցեալ անկատար. գրւում էի, իմացւում էի, գտնուում էի, համարւում էի :

Անցեալ կատարեալ. գրուեցի, իմացուեցի, գտնուեցի, համարուեցի. (ցալ, ցաւ) :

Յարակատար. գրուած եմ, իմացուած եմ, գտնուած եմ, համարուած եմ :

Յարակատար ներկայ. գրուած եմ լինում, իմացուած եմ լինում, գտնուած եմ լինում, համարուած եմ :

Յարակատար անցեալ. գրուած էի, իմացուած էի, գտնուած էի, համարուած էի :

Վաղակատար. գրուել եմ, իմացուել եմ, գտնուել եմ, համարուել եմ :

Վաղակատար անցեալ. գրուել էի, իմացուել էի, գտնուել էի, համարուել էի :

Գերակատար. գրուած եմ եղել, իմացուած եմ եղել, գտնուած եմ եղել, համարուած եմ եղել :

Գերակատար անցեալ. գրուած էի եղել, իմացուած էի եղել, գտնուած էի եղել :

Ապառնի ներկայ. պիտի գրուեմ, պիտի իմացուեմ, պիտի գտնուեմ :

Ապառնի անցեալ. պիտի գրուած լինեմ, պիտի իմացուած լինեմ, պիտի գտնուած լինեմ :

Ապառնի հարկադրական. գրուելու եմ, իմացուելու եմ, գտնուելու եմ :

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Պայմանական ներկայ. պիտի գրուէի, պիտի իմացուէի, պիտի գտնուէի :

Պայմանական անցեալ. պիտի գրուած լինէի, պիտի իմացուած լինէի, պիտի գըտնուած լինէի :

Պայմանական հարկադրական. գրուելու էի, իմացուելու էի, գտնուելու էի :

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ստորադասական ներկայ. որ գրուեմ, որ իմացուեմ, որ գտնուեմ :

Ստորադասական անցեալ. որ գրուէի, որ իմացուէի, որ գտնուէի :

Ստորադասական յարակատար. որ գրուած լինեմ, որ իմացուած լինեմ, որ գըտնուած լինեմ :

Ստորադասական գերակատար. որ գրուած լինէի, որ իմացուած լինէի, որ գըտնուած լինէի :

Ստորադասական հարկադրական. որ գրուելու լինեմ, որ իմացուելու լինեմ, որ գտնուելու լինեմ :

Ստորադասական հարկադրական անցեալ. որ գրուելու լինէի, որ իմացուելու լինէի, որ գտնուելու լինէի :

Հրամալական. գրուիր, գրուեցէք, իմացուիր, իմացուէք, գտնուիր, գտնուեցէք :  
մի գրուիր, մի գրուէք, մի իմացուիր, մի իմացուէք, մի գտնուիր,  
մի գտնուէք :

46. Սոքա գործ են ածւում և գ—լծորդութեան պէտ. համարուեցայ, գտնուեցայ, գրուեցայ ել :

47. Բացի այդ 10 տեսակ անցեալից, էլի ունենք ուրիշ անցեալներ, որոնք կազմը տեսում են՝ լինեմ օժանդակ բայով և խոնարհուող բայի անորոշ գերբայի ներգոյականով կամ ներկայ ժամանակով, այս ժամանակները այն դէպքում են գործ ածւում, երբ մի անցեալ գործողութեան վերայ խօսում է պատմողը և ներկայ ժամանակի կերպարանք տալով է ասում : Օր. Պետրոսը երբ անցնում է, ես նորան տեսնելիս եմ լինում կամ տեսնում եմ լինում (ում և լիս—միենոյն է—մէջ է նշանակում, այսինքն տեսնելու մէջ եմ) :

## Անցեալ պատմողական ժամանակներ

Ներկայ. գրելիս եմ լինում, կամ գրում եմ լինում :

Անցեալ անկատար. գրելիս էի լինում, կամ գրում էի լինում :

Վաղակատար. գրելիս եմ եղել, կամ գրում եմ եղել :

Վաղակատար անցեալ. գրելիս էի եղել, կամ գրում էի եղել :

Ապառնի ներկայ. գրելիս պիտի լինեմ, կամ գրում պիտի լինեմ :

Պայմանական ներկայ. գրելիս պիտի լինէի, գրում պիտի լինէի :

Ստորադասական ներկայ. որ գըելիս լինեմ, կամ գրում լինեմ :

Ստորադասական անցեալ. որ գըելիս լինէի, կամ գրում լինէի :

48. Կան այնպիսի բայեր, որոնք կանոններից խոտորւում են և խոնարհուում են առանձնակի կերպով, դոքա կոչուում են զարտուղի բայեր : Գալ ներկայ—դալիս՝ եմ փոխանակ գալում եմ. անկատար գալիս էի. կատարեալ եկայ. ապառնի պիտի գամ. Եկ. եկող, եկած, գալու :
- Ուտել, ուտում եմ, կերալ—կատարեալ. պիտի ուտեմ, կեր : Տալ, տալիս եմ. տալիս էի, տուեցի, տուր : Լալ, լալիս եմ—ներկայ. լալիս էի. կատարեալ—լաց եղայ. լաց պիտի լինեմ. լաց եղիր. լացող, լացած (լաց եղած), լալու (լաց լինելու). Պալ—ի կրաւորականը պիտի լինէր կանոնաւոր տուել, բայց որովհետեւ տուել ներգործական է, ուտսի կրաւորականը լինում է տրուել :
49. Եմ, համ, գիտեմ, ռանեմ—ներկայ է գրաբարի նման. անկատար, էի, կայի, գիտէի, ունէի : Ել ուրիշ ժամանակներ չունեն, դրանց թերին լրացնում է, լինել, կենալ, գիտենալ, ունենալ բայերը. եղայ, գիտացի—պիտի գիտենամ, ունեցայ, կամ—ի կատ.—կացայ ևլ :
50. Գ—Ծորդութեան ածանցական բայերի—, չ—տառերը կորցում են, եթէ եկամուտ տառեր են և շատերը ր—ի փոխուում. փախչել—փախալ—չ կորաւ. տանել—տարայ—ր—ի փոխուց. կորցնել—կորցրի—չ—ը յր—ի փոխուց. դնել—դրեցի ևլ :
51. Այն բայերը, որոնք միայն մի դէմքով են գործ ածւում, կոչուում են միադէմք բայեր. պէտք է, արժան է, վայել է ևլ : Կան կրաւորական ձևերից կազմուածներ—աստամ է, խօսաւամ է, շուռամ է, որոնց դիմադուրկ էլ կարելի է ասել, որովհետեւ յայտնի չէ դրանց դէմքը, զործողը :
52. Այն բայերը, որոնք մի գործողութիւն մէկ առարկայի միջոցով միւսի վերայ անցնելն են ցոյց տալիս, կոչուում են անցողական : Սոքա կազմուում են կամ յնէլ ածանցով կամ տալ բայով : Օր. մաքրել, մաքրեցնել, մաքրել տալ, կըպչել, կպցնել, կպցնել տալ. մեռնել, մեռցնել, շատ անգամ կըկնակի անցողական է դառնում, կպցնել տալ, մեռցնել տալ, ապրեցնել տալ ևլ :
53. Բացասական բայերի խոնարհուումը լինում է նոյն ձևով, ինչ ձևով որ հաստատական բայերը խոնարհուում են, միայն չ—տառը պիտի աւելացնել խոնարհուող բայի սկզբին եթէ պարզ է. չխօսեմ, չխօսեցի ևլ. իսկ եթէ բայը օժանդակով է՝ չ—տառը պիտի դնել օժանդակ բայերի վերայ, չեմ խօսում, չէի գնում. պիտի գնացած չլինեմ—չպիտի գնացած լինէի. բոլոր ժամանակները էլ խոնարհուում են. ապառնի—չպիտի գնամ. անցեալ ապառնի—պիտի գնացած չլինեմ. չեմ գնալու. պալմանական—չպիտի գնայի, պիտի գնացած չլինէի. չէ գնալու :
54. Այդ սովորական ապառնու և պալմանականի տեղ կարելի է գործածել չ—էմ—ը և բայի անորոշ դերբայը, ել—երը իլ—ի փոխած : Օր—չեմ խօսել—անցեալ

է, չեմ իօնիւ—ապառնի. չեմ խփել—անցեալ է, չեմ իփիւ—ապառնի : Չեմ իլփիլ, չեմ խփիլ ևլ : ( Զգործել—բայը խոնարհեցէք—հաստատականի բոլոր ձևերով ) :

55. Կրաւորական բացասական բայերը խոնարհւում են այնպէս, ինչպէս կրաւորական հաստատականները—միայն չ—աւելացնել պէտք է պարզերի և օժանդակ բայերի վերալ. չքանդուեցի, չեմ քանդուել, չպիտի քանդուեմ ևլ :
56. Կան այնպիսի կրաւորական բայեր, որոնք նշանակում են թէ գործողութիւնը մէկից կրելը և թէ փոխադարձաբար միմեանց տալը : Օր. ես ծեծուեցի նորանից և ես—մենք ծեծուեցինք միմեանց հետ. ես կուուեցի նորա—միմեանց հետ : Մենք տեսնուում ենք նրանից, մենք տեսնուեցինք նրան հետ : Սոքա կոչւում են կրաւորական փոխադարձ բայեր :

զ) Դ Ե Ր Բ Ա Յ .

1. Եթէ վերցնենք գործողութիւն ցոյց տուող մի բառ, դորա արմատի վերայ աւելացնենք եւ այս երեմն իւ այն ժամանակ կ'կազմուեն բայերի սկզբնական ձևերը, որոնք ոչ թիւ, ոչ ժամանակ և ոչ դէմք ցոյց կտան : Օր. գործ—ել, խօս—ել, կարդալ, մնալ ևլ :
2. Այսպիսի անորոշութիւն ցուցնող բայերի սկզբնական ձևերը կոչւում են Անորոշ դերբայներ :
3. Ել—ի տեղ՝ բայի վերայ եթէ աւելացնենք ոչ, ած, եւ կամ Ալ—վերջացող բայերի անցեալ կատ. Գ—դէմքի վերալ, այն ժամանակ կստանանք բայերի այնպիսի ձևեր, որոնք ոչ թիւ ունեն, ոչ դէմք—միայն ժամանակ ցոյց տուող են. Խօսոծ—խօսել, կարդացոծ—կարդացել, գնացոծ—գնացել : Ոչ—երը ներկայ ժամանակ են ցոյց տալիս—խօսող, կարդացող, գնացող : Ել—ած վերջացածները կոչւում են անցեալ դերբայ, ոչ—երը ներկայ դերբայ : Խօսած—անցեալ դերբայ, խօսող—ներկայ դերբայ :
4. Բայերի անորոշ ձևի վերայ եթէ աւելացնենք ու, կստանանք ապառնի ժամանակ ցոյց տուող դերբայ—որ կոչւում է ապառնի դերբայ : Օր. խօսել—խօսելու, կարդալ—կարդալու, գնացու ևլ :
5. Ալդ չորս ձևերը իբրև բայերի պաշտօն կատարողներ, կոչւում են դերբայներ, որոնք առանձին չեն խոնարհւում, ալլ օժանդակ բայերի հետ : Խօսել եմ, խօսած էի, խօսելու եմ, գնացող եմ ևլ. միայն անորոշ դերբայը և ներկան՝ բաղադրեալ ժամանակներ չեն կազմում. իսկ միւսները կազմում են բաղադրեալ ժամանակներ :
6. Անորոշ դերբայը իբրև գործողութեան անուն հոլովում է. խօսել, խօսելու, խօսելուց, ներգոյական—խօսելիս, խօսելով, խօսելորդ (լոդով), խօսելներուդ, խօսելներուցդ, խօսելներովդ : Բայերի բաղադրեալ ժամանակներ չի կազմում :

7. Ներկայ դերբայը ածականի պաշտօն է կատարում և անփոփոխ մնում, իսկ երբ առանձին է՝ հոլովում է ա—հոլովման պէս. խօսող, խօսողի և լ։ Գոյականով, խօսող մարդ, խօսող մարդուց և լ—անփոփոխ է մնում գոյականի Հետ։
8. Անցեալ դերբայներից միայն ած վերջացածն է իբրև ածական վարւում, և—վերջացածը ոչ. առաջինը իբրև ածական չի հոլովում. երբ առանձին է. գոյականաբար է վարւում և հոլովում առաջին հոլովման վերայ. խօսածի, խօսածից և լ։ Ել—անցեալ դերբայացուցիչը եթէ գրաբարի հին ձեռվն է վարուած, հոլովում է։ Օր. ննջեցեալի բարեկամները (ննջեցեալ մարդուննջեցած մարդու)։
9. Ապառնի դերբայը առանձին գործ չէ ածւում, այլ իբրև ածական անփոփոխ մնում. խօսելու տեղ. ասելու բան և լ։
10. Ոչ—ածանցի տեղ շատ անգամ իշ ածանցն է գրւում։ Օր. գործող—գործիչ. հրատարակող—հրատարակիչ. բոլոր ող—երի տեղ իշ դնել չի կարելի։ Խուզող—(ոչ խուզիչ), ուզող—(ոչ ուզիչ) և լ։
11. Լռա առառնի դերբայացուցիչ ածանցը շատ անգամ գործ է ածւում լի, լի—ածանցների ձեռվ, ուտելու կերակուր, ուտելի կերակուր—ուտելիք. խմելու ջուր, խմելի ջուր—խմելիք։ Լիք վերջաւորութիւնները գոյական են դարձնում դերբայներին։

Է) Ն. Ա. Խ. Գ. Ռ. Ո. Ի. Թ. Ի. Խ. Ն.

1. Կան այնպիսի բառեր, առանց որոնց նախադասութեան միաբը չի լրանալ, առանց ոլոնց առարկաների յարաբերութիւնը չի իմացուիլ։ Օր. ես խօսեցի նորա հետ, ես խօսեցի նորա—չի կարելի ասել. հետ բառը պիտի աւելացընենք, որ ես—ի և նորա—ի յարաբերութիւնը խմանանք, կանգնեցի սեղանի առաջ, չի կարելի ասել կանգնեցի սեղանի, առաջ բառը պիտի դրուի, որ հասկացուի սեղանի և իմ (ես—ի) յարաբերութիւնը—դրութիւնը, դիրքը։
2. Առարկաների յարաբերութիւն ցոյց տուող բառերը կոչւում են նախադրութիւն (բառի սկզբում դրուող բառ). որոնք լինում են լետադաս և նախադաս։ Քեզ ճօֆ, նորա տառաջ բայց քեզնից, տառանց ինձ, ճօֆ, տառաջ, բայց, տառանց նախադրութիւններ են։
3. Յետադաս նախադրութիւնները դրւում են արական հոլովով բառի մօտ. քեզ համար. ինձ ճօֆ. քեզ պէս և լ։ Նախադասներից շատերը նոյնպէս տրական հոլով են պահանջում. տառանց քեզ, դէպի մեզ, մինչև քեզ։ Հայցական հոլովով—միայն տունը, դէպի տուն։ Բացառական հոլովով գրւում է բայց նախադրութիւնը. բայց քեզնից. բայց մեզնից։ Իբրև, ինչպէս բոլոր հոլովներով, իբրև թշնամի, իբրև թշնամուց և լ։

4. Կան նախադրութիւններ, որոնք նախադիրով են գործ ածւում. մանկութիւնից ի վրա. բայց ի քեզնից. օրն ի բառն ել :
5. Շատ անդամ գոյականները իբրև նախադրութիւն, գործ են ածւում և հոլովում. ծառի եպենց—ետևում. մեզ վրայ, վրաներովս, ծառերի մէջը, մէջերներովս ել :

ը) Մ Ա Կ Բ Ա Յ

1. Այն բառերը որոնք նախադասութեան մէջ գանագան հանդամանքներ, ժամանակ, տեղ—գործողութեան կերպ են ցոյց տալիս, կոչւում են Մակբայներ : Այսպէս մարդ շատ կայ. երբոր գաս. Այսպէս, երբոր—մակբայներ են, այստեղ—տեղ է ցոյց տալիս, երբ որ—ժամանակ :
2. Մակբայները կազմւում են հետևեալ ածանցների աւելացմամբ բառերի վերայ, եռլ, բնու, անց, ուց, եմն, պէս. եղբայրաբար, հայերէն, սրտանց, հնուց, երբեմն, վերջապէս ել :
3. Գոյականներից կազմւում են մակբայներ և հոլովում. ետևից, այս տեղից, տեղերում : Դերանուններից կազմւում են, այսպէս, այնպէս, այդպիսով :
4. Կան տեղ ցոյց տուող մակբայներ. այստեղ, այնտեղ, տակը, վերեւ, առաջը, հեռուից, ներքեւից ել: Կան ժամանակ ցոյց տուող մակբայներ—այժմ, միշտ, ոչ երբէք, այսօրուանից, հիմա, վաղը ել: Որակական և քանակական գերանուններից կազմուած մակբայները նոյն անունն են կրում : Այսպէս, նոյնպէս, այնքան, այնչափ ել. քանակական և որակական մակբայներ են :

թ) Շ Ա Ղ Կ Ա Պ

1. Այն բառերը, որոնք երկու բառ, երկու նախադասութիւն միմեանց հետ կապում են, կոչւում են Շաղկապներ. ես և դու, մենք ու դուք, նա ի՞մ դու. եւ(ե), ու, ի՞մ շաղկապներ :
2. Այն շաղկապները, որոնք համաձայն խօսքեր են կապում, կոչւում են բաղհիւսական. և, ու, եւ, նաև, այլ և, միանգամայն :
3. Այն շաղկապները, որոնք անհամաձայն խօսքեր են կապում, կոչւում են ներհակական. ի՞ն, բայց, այլ, առկայն, երբէդք ել :
4. Ու շաղկապը շատ է գործ ածւում այն բառերից յետով, որոնք բաղաձայնով են վերջանում : Մարդ ու կին, օրն ու գիշերը ել : (բեր նախադասութիւններ, զանազան շաղկապներ և կապելու ձեւը ցոյց տնուը) :



Ժ Ա Յ Ն Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. Այն բառերը, որոնք մարդու ներքին լուզմունքները, գգացմունքներն են յալտնում, ուրախական, զարմացական ել. կոչւում են Զայնարկութիւններ : Ա՛ն, Ա՛ծ, ս՛հ, Տէր Աստուած, ափսոս : Բացագանչական Զայնարկ—ոհ, ահ ել : Տրտմական և ափսոսանք ցոյց տուղ—վայ, վահ, վախ, ոհ, ափսոս ել : Ցանկութիւն յալտնող—երանի : Բարկութիւն յալտնող—ալ, հայ : Զգուանք յալտնող—ոհ, էհ ել : (Բեր նախադասութիւններ զանազան ձայնարկութիւններով և ցոյց տուր նշանակութիւնները և զանազանութիւնները) :
2. Զայնարկութիւնով վերջանում է տասը մասունք—բանիների որոշումը, բոլոր մասունք բանիները սոքա են. Գոյական անուն, Ածական անուն, Թուական անուն, Դերանուն, Բայ, Դերբայ, Նախադրութիւն, Մակրայ, Շաղկապ և Զայնարկութիւն :
3. Դոցանից առաջին վեցը փոփոխական են կոչւում, որովհետեւ գոցա վերջաւորութիւնները փոխւում են. իսկ վերջին չորսը անփոփոխ, որովհետեւ գոցա վերջաւորութիւնները չեն փոխւում, բացի այն գոյականներից և դերանուններից օրոնք իբրև նախադրութիւն կամ իբրև մակրայ գործ են ածւում :
4. Մասունք բանիները սովորելուց յետով կարելի է մի նախադասութիւն Ստուգաբանական վերլուծման ենթարկել :

**Մասուգաբանական վերլուծումն (լուծում)**

Մենք—գնացինք տուն, հաց կերանք, մի ժամից յետոյ վերադարձանք : Մենք—անձնական դերանուն, լոգնակի թիւ, ուղղական հոլով : Գնացինք—չէզոք բայ, սահմ—եղանակ, անցեալ կատ. ժ. լոգնակի առաջին դէմք : Տուն—հասարակ գոյական անուն, եղակի թիւ, հայցական հոլով : Հաց—հասարակ գոյական անուն, եղակի թիւ, հայցական հոլով : Կերանք—ներգործական բայ, սահմանական եղանակ, անցեալ կատարեալ ժ. լոգնակի առաջին դէմք :

Մի—թուական (քանակական) անուն, եղակի թիւ, ուղղական հոլով : Ժամից—հասարակ գոյական, եղակի թիւ, բացառական հոլով : Յետոյ—նախադրութիւն : Վերադարձանք—չէզոք բայ, սահմ.—եղանակ, կատ.—լոգնակի առաջին դէմք : (Ո՞վ կասի ի՞նչ է նախադասութիւնը, ի՞նչ է ցոյց տալիս, քանի՞ տեսակ է լինում. ենթակայ, ստորոգեալ և լրացուցիչ. քանի՞ մասն բանի կալ, ո՞րն է առաջինը . . . . վերջինը, փոփոխական և անփոփոխ մասն բանիները ասա, հոլովիր, խոնարհիր, լուծիր այս նախադասութիւնը ել :



## Բ. ՄԱՍՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Հ Ա. Մ Ա. Զ Ա Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. Համաձայնութիւնը քերականութեան այն մասն է, որ պարապում է նախադասութեան անդամների (մասունք բանիների) կապակցութեան կանոններով, միմեանց հետ ունենալիք լարաբերութեամբ և համաձայնութեամբ :
2. Համաձայնութիւնը բաժանուում է երեք մասի. Ա. Նախադասութեան անդամների (մասունք բանիների) համաձայնութեան. Բ. Նախադասութիւնների համաձայնութեան և Գ. Ուղղագրութեան :

Ա.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ Ա.ՆԴԱՍՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Նախադասութեան և սորա անդամների համաձայնական կազմութիւնը .

ա) Որոշիչ, յատկացուցիչ բացայայտիչ և պարագայական բառեր.

1. Նախադասութեան մէջ միտք արտալայտելու համար հարկաւոր են գլխաւոր անդամներ—ենթակայ և ստորոգեալ. միտք լրացնելու համար հարկաւոր է լրացուցիչ բառ : Օր. Գեղեռնը գնաց, առաջինը ենթակայ է, երկրորդը ստորոգեալ, միտք կայ. բայց լրացած չէ. Գեղեռնը ուր գնաց : Եթէ ասենք Գեղեռնը գնաց առան, տունը կդառնալ լրացուցիչ—միտք լրացնող բառ : (Տես գրքիս սկիզբը և կրկնիք անցածները) :
2. Աշակերտը գնաց առան, այս նախադասութիւնը թէև լրացած միտք է արտայտում, բայց ամեն մի անդամը պարզաբանուած չէ. Բնչպիսի տուն է, մեծ, փոքր, մաքուր ևլ. չգիտենք. եթէ ասենք, աշակերտը գնաց հագուստ առան : Աշակերտը ստուգաբանութեան մէջ կոչւում էր ածական :
3. Համաձայնական նախադասութեան մէջ բոլոր ածականները կոչւում են Որոշիչ, այսինքն այնպիսի բառեր, որոնք առարկայի յատկութիւնը որոշում են. հագուստ—Որոշիչ է :
4. Աշակերտը գնաց հագուստ առանը, նախադասութիւնը էլի պարզաբանուած չէ, որովհետեւ չգիտենք տունը ումն է. եթէ ասենք, աշակերտը գնաց Պետրոսի հագուստ առանը, այն ժամանակ իմանում ենք, որ տունը պատկանում է Պետրոսին, Պետրոսի—սեռական հոլովով դրուած անունը ցոյց է տալիս պատկանելիութիւն, ցոյց է տալիս տուն անուան ում պատկանեալ լինելը :
5. Նախադասութեան մէջ պատկանելիութիւն ցոյց տուող բառերը, որոնք անուան մօտ են դրուում սեռական հոլովով և անուան ում պատկանելն են

- ցոյց տալիս, կոչւում են Յատկացուցիչներ : Պետրոսի—յատկացուցիչ է :
6. Աշակերտը գնաց Պետրոսի ժողովը պունը—այս նախադասութիւնը էլի անորոշ կողմեր ունի, ո՞ր աշակերտը, չենք իմանում. եթէ ասենք Լեռն աշակերտը գընաց Պետրոսի մեծ պունը, այն ժամանակ կիմանամք աշակերտը ո՞րն է. Լեռնը բացայատում է թէ աշակերտը ո՞րն է :
  7. Այն բառերը նախադասութեան մէջ, որոնք բացայալտում են մի որ և է անուն, թէ ո՞րն—ո՞վ է, կոչւում են բացայալտիչներ : Լեռն բացայալտիչ է աշակերտ բառին : Լեռն աշակերտը գնաց Պետրոսի մեծ պունը. Լեռն—բացայալտիչ, աշ.՝ բացայալտեալ, Պետրոսի յատկացուցիչ, տունը յատկացեալ. մեծ—որոշիչ : Յատկացուցիչը գտնում ենք ում, բացայալտիչը ո՞րն է, Որոշիչը—Բնչպիսի—Հարցումներով :
  8. Լեռն աշակերտը գնաց Պետրոսի մեծ պունը—նախադասութիւնը դեռ էլի անորոշ կողմեր ունի. Երբ, ո՞ր ժամանակ գնաց, լայտնի չէ. եթէ ասենք. այսօք Լեռն աշակերտը գնաց Պետրոսի մեծ պունը. իմանում ենք, որ գնացել է ալսօր և ոչ երեկ. այսօր բառը ժամանակ ցոյց տուող բառ է և ստուգաբանութեան մէջ կոչւում է Մակեայ—ժամանակական :
  9. Նախադասութեան մէջ ժամանակ, տեղ, հանգամանքներ—պարագաներ ցոյց տուող բառերը կոչւում են մակբայներ՝ պարագայական բառեր : Այսօք, Երբնր, պարագայական բառեր են կամ մակբայներ :
  10. Պարագայական բառերը որովհետև մակբայներ են, ուստի նրանց նման լինում են ժամանակ, տեղ, պատճառ, հետեանք ևլ. ցոյց տուող պարագայականներ : Նո գնաց հաց սուտեցու պատրիտակով. Բնչու համար գնաց. ուտելու պատրուակով—պատճառական պարագայական բառ է :
  11. Կարող ենք մի որևէ է նախադասութիւն համաձայնական վերլուծման ենթարկել :

### Համաձայնական վերլուծում (լուծում)

Գարնան օրերում Վարդանի զօրքը ջարդեց Պարսկական մատեան գունդը :

Սա մի պարզ ընդարձակ նախադասութիւն է, որովհետև բացի գլխաւոր անդամներից սորա մէջ կան և երկրորդական անդամներ :

Ստորոտեալ—կլինի ջարդեց. զօրքը Բնչ արաւ (ջարդեց) :

Ենթական—կլինի զօրքը, ո՞վ ջարդեց. (զօրքը) :

Լրացուցիչ—գունդը, զօրքը Բնչը ջարդեց (գունդը) :

Պարագայական խօսք կամ ժամանակական մակբայ—գարնան օրերում. Երբ ջարդեց (գարնան օրերում) :

Յատկացուցիչ—կլինի Վարդանի, զօրքը յատկացեալին, ում զօրքը ջարդեց. (Վարդանի) :

Որոշիչ—պարսկական, Բնչպիսի գունդ էր—պարսկական :

Բացալատիչ—կլինի Մատեան, որ գունդը—Մատեան :  
(Ո՞վ նոյն նախադասութիւնը ստուգաբանական լուծման կենթարկի—մասն քանի):

բ). ԲԱՂԱԴՐԵՍԼԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Աշակէրտը գնաց առևն—պարզ նախադասութեան մէջ աշակերտ բառին կարող ենք տալ մի որոշիչ, որ իմանանք ինչպիսի աշակերտ է . աշակերտը աշակերտ է, գնացաւալով աշակերտը գնաց տուն, որովհետեւ գլխաւոր իմաստը դրանումն է. որը քաղաքավարի է, երկրորդական է և որոշում է թէ ենթական —աշակերտը ինչպիսի է :
2. Բաղադրեալ նախադասութեան մէջ այն երկրորդական նախադասութիւնը, որը որոշում է գլխաւոր նախադասութեան մի անդամի յատկութիւնը, կոչւում է երկրորդական Որոշիչ նախադասութիւն . (այլ աշակերտ է, երկրորդական Որոշիչ նախադասութիւն է) :
3. Որոշիչ նախադասութիւնը բաժանում է գլխաւորից ստորակէտով, եթէ ըսկզբումն է, իսկ եթէ մէջումն է՝ երկու ստորակէտներով է բաժանում գլխաւորից. աշակերտը, որը աշակերտ է, գնաց առևն :
4. Աշակէրտը, որը աշակերտ է, գնաց առևն—բաղադրեալ նախադասութեան մէջ Որոշիչ նախադասութիւնը կարող ենք կրնատել, աշակէրտը աշակէրտ գնաց առևն :
5. Աշակէրտը գնաց առևն—պարզ նախադասութեան մէջ գնաց բայի գնալու պատճառը յայտնի չէ, եթէ ասեմ, աշակէրտը գնաց առևն, որպէսով հայ ուտի, պատճառը իմացուեց : Գլխաւոր նախադասութիւնն է աշակէրտը գնաց առևն, երկրորդ նախադասութիւնը է—որպէսով հայ ուտի և ինչպիսի երկրորդական. պատճառական է, որովհետեւ գնալու պատճառն է ցոյց տալիս :
6. Այն երկրորդական նախադասութիւնները, որոնք գլխաւոր նախադասութեան —ստորոգեալի գործ, պատճառը, ժամանակը, տեղն են ցոյց տալիս, կոչւում են Պարագայական երկրորդական նախադասութիւններ (մակրայների նման) : Որպէսով հայ ուտի պարագայական նախադասութիւն է :
7. Սոքա նոյնպէս ստորակէտով բաժանում են գլխաւոր նախադասութիւնից : Աշակերտը գնաց տուն, որպէսով հայ ուտի :
8. Պարագայական երկրորդական նախադասութիւնը կարելի է կրնատել. աշակէրտը գնաց առևն հայ ուտիւու :
9. Աշակերտը ասում է՝ Ան գնաւմ էմ առևն հայ ուտիւու—այս բաղադրեալ նախադասութեան մէջ գլխաւորն է՝ աշակերտը ասում է, երկրորդականը կլինի—Ան գնաւմ էմ հայ ուտիւու. աշակերտը ինչ է ասում, դորա միտք լրացնողն է այս—թէ գնում եմ տուն հայ ուտիւու: Թէ գնաւմ էմ հայ ուտիւու լրացնոցիչ է :

10. Այն երկրորդական նախադասութիւնները, որոնք գլխաւոր նախադասութեան իմաստը լրացնում են, կոչւում են լրացուցիչ Երկրորդական նախադասութիւններ, Այս գործական նախադասութիւնը բաժանվում է գլխաւորից ստորակետով կամ բութով :
11. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը բաժանվում է գլխաւորից ստորակետով կամ բութով :
- Աշակերտը ասում է՝ Այս գործական հայ ուտելու :
12. Երկրորդական — ենթակալ նախադասութիւն կոչւում է բաղադրեալ նախադասութեան մէջ այն, որ գլխաւոր նախադասութեան ենթակալի տեղն է գրւում : Ո՞վ որ դասը շատ առջրի, պիտի գնայ իրենց տուն : Գլխաւոր նախադասութիւնը է — պիտի գնայ երենց տուն, ով — ենթական է «ով որ դասը շատ առջրի, կլինի երկրորդական — ենթակալ նախադասութիւն :
13. Այդ նախադասութիւնը կրատում է — դասը առջրով պիտի գնայ իրենց տուն : Երկրորդական ենթակալ նախադասութիւնները բաժանվում են գլխաւորից ստորակետով :
14. Այսպիսով բաղադրեալ նախադասութիւնները երկու մասից են բաղկացած, գլխաւորից և Երկրորդականից : Սոքա էլ լինում են, Որոշիչ, Լրացուցիչ, Պարագայական և Ենթական — Երկրորդական նախադասութիւններ :
15. Հետեւեալ բաղադրեալ նախադասութիւնը պիտի Երկրորդականների վերածել : Այն աշակերտը, որը աշխատասէր է, ասաց, թէ՝ գնում եմ տուն : Գլխաւոր նախադասութիւնն է — այն աշակերտը անաց : Լրացուցիչ նախադասութիւնն է — թէ գնում եմ տուն (Քնչ ասաց աշակերտ) : Որոշիչ նախադասութիւնն է — որը աշխատասէր է (Քնչպիսի աշակերտ է) :

### Բ. ՆԱԽ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԳՅԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Նախադասութեան անդամներն են. Ստորոգեալ, ենթակալ, լրացուցիչներ, լատկացուցիչ, բացալատիչ և պարագայական բառեր :
- ա) ՍՏՈՐՈԳԵԱԼ (ԲԱ.3)
2. Նախադասութեան մէջ ստորոգեալները լինում են բայեր, օժանդակ բայերով գոյական, ածական և թուական անուններ : Օր. ես նրան իտէցի, նա յի նոր է, մենք նորդ ենք, նա մէջ է, մենք երիւ ենք. թանաքը այս է, իտէցի, յի նոր է, նորդ ենք, մէջ է, երիւ ենք, այս է, ստորոգեալներ են, բայից, ածականից, գոյականից և թուականներից բաղկացած :
3. Ստորոգեալները լինում են պարզ և բաղադրեալ ժամանակներով. բաղադրեալ ժամանակները կազմւում են օժանդակ բայերով և գերբայններով :
4. Սահմանականի ներկալ ժամանակը ցոյց է տալիս գործողութեան ներկայումս կատարուելը. Ես գնում եմ տուն. Նոքա գնում էն տուն ևլ : թ). գործ է ածւում անցեալ որ և է պատմութեան ներկալ ժամանակով պատմելիս : Օր.

Վահանը մքնաւմ է Գուին և ուրախութեամբ ռշտանում է ժողովրդին և համբարդում է Հայրապետի աջը : գ). Ներկայ ժամանակը գործ է ածւում ապառնի ժամանակի տեղ, երբ գործողութիւնը ստուգիւ շուտ է կատարուելու. ես այսօք գնուամ եմ. փոխ. ես պիտի գնամ :

- | 5. Սահմանականի անցեալ անկատարը ցոյց է տալիս թէ՝ գործողութիւնը անցել է, բայց չի վերջացել : Մենք գնաւմ ենք նորա ետևից : գ). Նկարագրութիւնների մէջ գործ է ածւում : Արագածը զեղեցիկ փայլ ռանդր, ձիւնից անդրադարձող ճառագալիթների ցոլմաւնքը աչքեր եր իրարացնուամ . . . . . գ), Կատարեալի տեղ է դրւում, եթէ գործողութիւնը նոր է անցել. դու այստեղ էիր. փոխանակ եշտ :
- | 6. Սահմանականի կատարեալը ցոյց է տալիս գործողութիւնը կատարուած, վերջացած է: Նոքա գնային տուն, հաց էրտն . . . . :
- | 7. Սահմանականի յարակատարը ցոյց է տալիս, որ գործողութիւնը կատարուած վերջացած է, անցեալ կատարեալից—առաջ, ես գնացի—(մի քիչ առաջ). ես գնացած եմ (ես գնացի—ից առաջ) :
8. Սահմանականի յարակատար—ներկան ցոյց է տալիս անցեալ գործողութեան ներկայ ժամանակով պատմելը. ես նորան տեսած եմ լինում, ալո՛, այն ժամանակ :
9. Սահմանականի յարակատար—անցեալը ցոյց է տալիս, որ անցեալ գործողութիւնը յարակատարից առաջ է կատարուել: Օք. ես նորան դեսոծ էի :
10. Վաղակատարը գործ է ածւում այն ժամանակ, երբ անցեալ գործողութիւնը վերջացել է յարակատարից քիչ առաջ: Հայրու էրէն եկել է: (երէկ եկած է—չի կարելի ասել). բ). երբ անցեալ գործողութեան հետևանքը մնում է, առաջ էն լեռնացինուը հասպատակուել է:
11. Վաղակատար—անցեալը ցոյց է տալիս դրանից աւելի վաղ կատարուած մի գործողութիւն. կալուշենուը հասպատակուել էր, երբ որո՞ւ . . . . :
12. Գերակատարները ցոյց են տալիս այնպիսի գործողութիւններ, որոնք կատարուած վերջացած են վաղակատարից առաջ. ես գնային եմ եշտ, ես գնային եկ եշտ—երբ նո . . . . :
13. Անցեալ պատմութիւնները ներկայ ժամանակով պատկերացնելու համար գործ է ածւում անորոշ գերբայի լիս—վերջաւորութիւնը լինել բայի բոլոր ժամանակների հետ: Ես նորան դեսնելիս եմ լինուամ, երբ նո լին Տօնեանուամ (լին) եր լինուամ: Ես նորան դեսնելիս եմ եշտ, երբ . . . . : Եւ այսպէս շարունակաբար այն աստիճանական գործողութեան չափով, ինչ որ ասացինք սահմանականի անցեալների համար :
14. Լինել բայը շատ անգամ խոնարհուող բայի հետ խոնարհուամ է (լիս) վերջաւորութեան նշանակութեամբ, անցեալ գործողութիւններ ցոյց տալով: Տեսնում եմ լինում, փոխանակ տեսնելիս եմ լինում, տեսնում էի լինում....ել:

Ու՞մ—նշանակում է հէջ. լիս—նշանակում է հէջ, պեսանում և պեսանէլիս—միևնույն նշանակութիւն ունեն ինչ որ տեսնելու մէջ—ը :

15. Սահմանականի ապառնին ցոյց է տալիս, որ գործողութիւնը դեռ նոր պիտի կատարուի. որի համար երկու մասնիկ կայ, կը—և պիտի բառը : Ես պիտի նորու ժնու գնում. ես իշխան նորու հօտ: (Տաճկահայոց լըզուում պիտի է գործածաւմ, ուստի առելի որոշ առաջ պիտի—ին պատեցինք) :
16. Կը—ով ապառնին աւելի մօտակայ գործողութեան նշանակութիւն ունի, քան պիտի—ով ապառնին : Ես նորուն չ'առեմ. ես նորուն պիտի առեմ—տարբերութիւնն երեւում է. առաջինը (կ'ասեմ) ներկային մօտ է :
17. Ապառնի—անցեալը գործ է ածւում, երբ ապառնի գործողութիւնը անցեալ համարուելով է պատմւում. ես վաշը պիտի գնույած լինեմ:
18. Հարկադրական ապառնին գործ է ածւում այն ժամանակ, երբ ապագայ գործողութիւնը պիտի կատարուի գիտաւորութեամբ՝ ստիպմամբ, հարկադրուած: Ես նորուն սպանելու էմ:
19. Պայմանական ներկան գործ է ածւում, երբ բայի ապագայ գործողութիւնը պայմանի տակ է դրած: Ես պիտի գնոյի, ելեւ անչյու չկար :
20. Պայմանական անցեալը գործ է ածւում, երբ գալիք գործողութիւնը պայմանով և անցած ժամանակով է պատմւում: Ես պիտի գնույած լինեմ, ելեւ անչյու եկած չլինեմ :
21. Հարկադրական պայմանականը ցոյց է տալիս, որ գալիք գործողութիւնը դիտաւորուած պայմանի տակ է դրուած: Ես գնույուն էմ, ելեւ անչյու չկար :
22. Ստորագասականի ժամանակները ցոյց են տալիս, որ գործողութիւնները գեռկատարուելու են և կասկածաւորութիւն կայ սոցա կատարուելու մէջ. որ—գնում—չ'առեմ, որ գնոյի—իտուէմ, որ գնույած լինեմ—տասած էլ հլինեմ, որ գնույած լինեմ—տասած էլ իլինեմ, որ գնույուն լինեմ—իտուէմ, որ գնույուն լինեմ—իտուէմ ևլ :

### բ). ՍՏՈՐՈԳԵԱԼ և ԵՆԹԱԿԱՅ

23. Ենթական լինում է գոյական, ածական—գոյականաբար վարուած, դերանուն գոյականի տեղ դրուած, դերբայներ—որոնք գոյականաբար են վարուում: Մարտը եկաւ. Յիմորը եկաւ. նու եկաւ. գոյլը լու է չոն չգոյլը. գնույողը եկաւ. բան արածը լու է հան չարածը ևլ. մարտը, յիմորը, նու, գոյլը, գնույողը, բան արածը—ենթականեր են :
24. Նախադասութեան մէջ ստորոգեալը համաձայնում է ենթակայի հետ թուով և դէմքով: Մ'ենք գնույնիք պարագան. ես գնոյի պարագան ևլ :
25. Հաւաքական գոյական ենթակաները եթէ եզակի թուով և նշանակութեամբ են վարուած, բայը դրուում է լոգնակի. ծոշավորութ ենթուեց. ջօրիք ջարուեց. ջօրիք ջարուեցին. հօրերը յբրուեցին :

26. Թօռական ենթակալի մօտ բայը եզակի է դրւում. Երիւ հարեւը հարու ընկառ դաշտաւմ. Հայար հոգի սպանուեց ևլ :
27. Երկու և աւելի թուով ենթակալի մօտ բայը դրւում է լոգնակի. Ես ու դու գնանք: Հայը ու հայրս եկան: Մէնք և դուք գնացինք :
28. Երկու եզակի ենթակալ եթէ իբրեւ մի բառ են գործ ածւում եզակի մըտքով, այն ժամանակ եզակի բայ էլ պահանջում են. ամէն ըստի մէջ չափ ու սոհնան չափ :
29. Մի քանի եզակի ենթակաների ստորոգեալը դրւում է եզակի, երբ իւրաքանչիւր ենթակալի մօտ ենթադրւում է չ'գրուած բայը և ստորոգեալը իւրեւ վերջին ենթակալի պատկանող բայ—եզակի է դրւում: Իշխանութիւնն, հարստութիւնն, անուն, ամէն ինչ էրրաւ. այսինքն իշխանութիւնը իւրաւ, հարստութիւնը իւրաւ.... ևլ: Ոչ մեայն հայուսանուը, այլ և պարսկաստանը ընկառ արտբնելը իշխանութիւնն առաջ է:
30. Ենթակաների զանազան գէմքերով դրւուած ժամանակ, ստորոգեալը դրւում է լոգնակի այն գէմքով, որը նախապատիւ է: Ես և դու գնանք. դու և նա գնացիք: Ես և նա գնացինք :
31. Օժանդակ բայերը գոյականով և ածականով դրուելիս, ենթական համաձայնում է օժանդակի հետ, իսկ ածական և գոյականը անփոփոխ են մնում: Ես մեղաւոր էմ. մէնք մեղաւոր ենք: Կովն ու եղբ ընտանի ինդրանի են. (Կովն ու եղբ ընտանի կենդանիներ են—նոյնպէս կարելի է ասել):
32. Միաւորեալ նախադասութեան մէջ օժանդակ բայերը զեղջւում են և մի անդամ կըկնւում սկզբում կամ վերջում: Մէնք ուսպում ենք, ինուամ և ինուամ կամ մէնք ուսպում, ինուամ և ինուամ ենք:
33. Դիմաւոր բայերի ենթական դրւում է ուղղական հոլով. նոքա գնացին, հարու եկաւ, հովերը փախան :
34. Տրական հոլով ենթակալ դրւում է ունեմ բայի մօտ, բայց աւելի ուամկական է քան գրականական. աղջառին տուն չստանի, տեղ չտանի, նրան հայը էլ ունի հայը էլ փոխանակ ասելու նա հայը էլ ունի հայը էլ:
35. Տրական հոլովով ենթակալ դրւում է անդէմ նախադասութեան մէջ անորոշ գերբայի մօտ. հարիւտոր է ինչ գնառ այստեղին ևլ. պէտք է մէջ մաս այստեղին գնառ:

գ). ՈՐՈՇԻՉ և ՈՐՈՇԵԱԼ (ԳՈՅՑԱԿԱՆ) .

1. Նախադասութեան մէջ բոլոր ածականները կոչւում են որոշիչ և այն մասնիք բանիները, որոնք ածականաբար են վարւում, այն է գերբայներ, գերանուններ, թուականներ և գոյականներ—նոյնպէս որոշչներ են: Տեսաց գեշեցին այդին. Երիւ մարդ տեսալ. այս մարդն եկաւ. տեսակ տեսակ ծառեր զատ կալին, նա ծառայ մարդ է. Սպանուած մարդիկներ են:
2. Ածականները միշտ գրւում են գոյականից առաջ, Որոշչները դրւում են միշտ որոշեալներից առաջ և չեն հոլովում, անփոփոխ են մնում: Մէր հրա-

շաւել պարտէզներից :

3. Որոշեալներից նրանք են առաջ դրւում, որոնք որոշեալ ածականի պաշտօն են կատարում. դերանուններն առաջ են դրւում միւս որոշիչներից. իմ գեղեցին տունը. ի՞ր հիտուալը ալդին ել :
4. Պարզ նախադասութեան մէջի որոշիչներն եթէ շեշտուում են իմաստի կողմից, այն ժամանակ որոշիչը յետ է դրւում իբրև ստորոգեալ զօրութեամբ իմացուող ենթակալի. Օր. Ծի ուժեղ բարձրահասան հարդ անայ, ասւում է, մի ուժեղ մարդ տեսայ բարձրահասան, ալսինքն որը բարձրահասակ է: Ահա Քեղ պէտք հարդիկ—ահա մարդիկ քեզ պէտքական—ալսինքն, ահա մարդիկ, որ քեզ պէտքական են :
5. Որոշիչները եթէ առանձին գործածուեն, այն ժամանակ իբրև գոյական հոլովում են. եթէ երկու որոշիչներ լինեն, երկրորդ որոշիչն իբրև գոյական փոփոխուում է: Բարձրահասան ալս է. հարդուոա անդիտանների փողը փտում է:
6. Որոշիչները կրկնուում են սաստկութիւն ցոյց տալու մտքով, սուր սուր սլաքներ. շարժ շարժ մարդարիտներ. հոյս հոյս աստղեր :
7. Զափ, կշիռ, ձեւ ցոյց տուող գոյականները իբրև որոշիչ դրւում և հոլովում են, բաժաներով գինի, փուլերով միրգ, կանգուններով չիթ :
8. Դերբայները իբրև որոշիչ անփոփոխ են մնում, իբրև գոյական առանձին գործածուած, հոլովուում են: Կերպած տանձ.... իմոց մարդ, իմելու գինի, ինքնեցից բեր, խոնչից հեռու կաց. իմելիք ունիք ել,

#### դ). ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ և ՅԱՏԿԱՑԵԱԼ

1. Այն սեռական հոլովով բառը, որը դրւում է ուրիշ անուան մօտ և նրա մում լինելը ցոյց տալիս, կոչում է յատկացուցիչ. իսկ միւսը յատկացեալ: Զրի բաժակը. հարդու դէմքը: Զրի և հարդու յատկացուցիչ են, բաժակը և դէմքը յատկացեալ :
2. Եթէ յատկացուցիչն անորոշ է, որոշիչ—յօդ (ը—ն) չի դրւում: Օր. Ասգառարի հրաման են կարդում: Գրի կազմեր են կտրատում :
3. Եթէ յատկացուցիչը որոշեալ է, որոշիչ յօդերը (ը—ն) դրւում են յատկացեալի վերայ. պարտէու դաշները փակեցիր. պահ պատրահանը փակիր :
4. Եթէ յատկացուցիչը յատնի—որոշեալ անուն է, երբեմն նորա վերալ որոշիչ յօդ է դրւում. գրին երեսը ծածկեցիր (այն մեր իմացած գրքի):
5. Յատկացուցիչը անփոփոխ է մնում, յատկացեալը միայն հոլովուում է. սենեակի դաշներով անց ու դարձ են անում :
6. Դերանուն յատկացուցիչների փոխարէն գործ է ածւում Ս, Դ. դիմորոշ յօդեր. իսկ ն—դրուելիս այն էլ է հասկացւում նորա էլ. գերքս—իմ գիրքը, գիրքդ—քո գիրքը. գիրքը բեր—այն գիրքը բեր և ոչ նորա գիրքը բեր: Խեղճ, տունը քանդուեց (նորա տունը և ոչ այն):

7. Եթէ գերանուն յատկացուցիչն և յատկացեալը յոգնակի են, յատկացեալը դիմորոշ յօդով գրուելիս՝ կրկնակի յոգնակիով է գործածում։ Գրքերս—իմ գրքերը, գըքերդ—քո գըքերը. գըքերներս—մեր գըքերը. գըքերներդ—ձեր գըքերը։
8. Եթէ յոգնակիացուցիչը ներ է և ոչ եր, այն ժամանակ կրկնակի յոգնակին լինում է ակա և ոչ ներ. վառարաններնիս և ոչ վառարաններներս. տախտակներնիս և ոչ տախտակներներս,—մեր վառարանները, մեր տախտակները, բազմավանկների վերալ նիս է աւելանում կրկնակի յոգնակիում։
9. Նախորդ նախադասութեան մէջ որոշուած յատկացեալը, յաջորդ նախադասութեան մէջ կարող է զօրութեամբ իմացուել և այն ժամանակ յօդը կըդրուի յատկացուցչի վերալ. տան կէսը ալրուեց, իսկ ննջարանինը ոչ. գըքերի կազմերը ալրուեցին, իսկ նարեհինը ոչ (նարեկ գըքի)։

Ե). ԲՈՅԱՅԱՅՏԻՉ և ԲՈՅԱՅԱՅՏԵԱԼ

1. Այն բառերը, որոնք մի ուրիշ բառի ով լինելը, ո՞րը լինելն են ցուց տալիս, կոչում են բացայատիչներ։ Ելլակ գետը հոսում է. գետը կլինի ենթակայ, երասխ—բացայատիչ—գետը բացայատեալ։
2. Բացայատեալը դրում է որոշեալ յօդով (ը—ն), իսկ բացայատիչը առանց յօդի։ Վաղարշակի թագաւորը սպանեց Վարդան զօրավարին. որոշեալ յօդ ունեցողներն են թագաւորը և զօրավարին, մէկը ենթակայ, միւսը լրացուցիչ—կլինեն բացայատեալ. իսկ անյօդ—Վաղարշակ և Վարդան կլինեն բացայատիչ։ Հիմա դորա հակառակը—Առաքառը Վաղարշակը սպանեց զօրավար Վարդանին, թագաւոր և զօրավար կլինեն բացայատիչ։ իսկ Վաղարշակը և Վարդանին բացայատեալ, որովհետեւ յօդ ունեն և մէկը ենթակայ իսկ միւսը լրացուցիչ է։
3. Բացայատիչը առանց յօդի է լինում սովորաբար. իսկ բացայատեալը սովորաբար յօդով. երբ բաղադրեալ է բացայատիչը և ուզում ենք խօսքը ուժեղացնել—շեշտել, այն ժամանակ բացայատիչը կարող է յօդ առնել։ Օր. կանոնաւոր է. Վարդան՝ հայոց զօրավարը մեռաւ. շեշտուած է, Վարդան՝ հայոց զօրավարը սպանուած է (որտեղ հասկացւում է Վարդան զօրավարը, հայոց զօրավարը)։
4. Բացայատեալը գեղջուելիս նորա յօդը դրում է բացայատչի վերալ, երբ նախորդ նախադասութիւնից յալտնի է բացայատեալը։ Օր. Վարդան զօրավարը մեռաւ, բայց Վահանը կենդանի մնաց, այսինքն Վահան զօրավարը։
5. Ենթակայ և լրացուցիչ եղող բացայատեալների բացայատիչները չեն համաձայնում կանոնաւոր առմամբ. իսկ եթէ ուզում ենք շեշտել բացայատիչը, այն ժամանակ համաձայնում են. ժողովրդի ոխերիմ Աշխարհ՝ Բարսեղին սպանեցինք—սա կանոնաւոր է—առանց շեշտելու. ժողովրդի ոխերիմ Աշխարհ՝ Բարսեղին—սպանեցինք, շեշտուած է և համաձայնած բացայատեալի հետ։

**զ) պարագայական բառեր.**

1. Պարագայական բառեր դառնում են բոլոր մակեայները և այն գոյական ու ածականները, որոնք Մակեայօրէն են գործ ածւում : Ե՞րբ պիտի դաս. այսօր գնում ենք. իշխան կաց. երբ, ալսօր, խելօր—պարագայականներ են :
2. Գոյականները առանձին և կրկնուելով պարագայական բառեր են կազմում : Գիշեր և յերեկ աշխատում ենք : Օրեց օր աւելանում է. ճահափ ճահափէ տուած կուում են. բերանից բերան խօսում են :
3. Ածականները երբ հայցականաբար են գործ ածւում բայերի մօտ դրուած, այն ժամանակ լինում են պարագայական բառեր. մենք խօսում ենք ձշարիպ և ռաշիչ քան թէ դուք :
4. Ո՛չ և մի' մակեայները շատ անգամ գործ են ածւում բայերի հետ, առաջինը բացասութիւն ցոլց տալով, երկրորդը արգելումն : Զէ՛մ գնուած. մի' գնուր պուած :
5. Ոչ և մի առանձին էլ են գործ ածւում, բառերի հետ էլ : Ոչ մարդ ես, ո՛չ ծեր....: Խօսում մի', անիլ մի', չէ՛մ գնում, մի' անիր :
6. Զ—և մի—արգելական հրամայականներից առաջ էլ են դրուում, յետ էլ. միայն յետ դրուելիս հրամայականի բարիստում է շ—ի : Մի գնուր, մի գործիր—գործիլ մի', գնուլ մի', թող չխօսոյ. թող խօսայ ո՛չ ասի ո՛չ—չսակ ևլ :

**է) Խնդիրներ (Լրացուցիչներ)**

1. Այն բոլոր լրացուցիչները, որոնք դրուում են նախադասութեան մէջ—միտք լրացնելու համար, կոչւում են խնդիրներ, (այսինքն բայի կողմից խնդըրուածք, իւր միտքը լրացնելու): Մեր առևնը լիքն է հարդիշներուն: լիքն է բայը, խնդըրում է՝ պահանջում է հարդիշներուն բառը իւր միտքը լրացնելու համար :
2. Խնդիր պահանջող—խնդրառու բառերը գլխաւորապէս բայերն են, մասամբ անունները և նախադրութիւնները : Խնդիր լինում են—փոփոխական մասն բանիները բացի բայից :
3. Բոլոր հոլովները խնդիրներ են, ուստի կոչւում են խնդիր. (ուղղական սեռական . . . . .) հոլովով :

**ը) Ուղղական հոլովով խնդիր.**

4. Օժանդակ էական բայը՝ ածականով և գոյականով դրուած ժամանակ լինում է ստորոգեալ. իսկ եթէ օժանդակը առանձին ստորոգեալ կոչենք, ածականը և գոյականը ուղղական հոլով խնդիր կլինեն: Ես երջանիկ եմ. երջանիկ եմ ստորոգեալ է. իսկ թէ եմ լինի ստորոգեալ, երջանիկ կլինի Ուղղական խնդիր :
5. Երբ չեղոք և կրաւորական բայերի մօտ են դրուում գոյականը և ածականը, այն ժամանակ լինում են ուղղական հոլովով խնդիր : Այս պիտի կոչուի գիտչ շատերը որ տղնիւ էին երեսում—տնտիւնիւ դուրս եկան :

### թ) Հայցական հոլովով խնդիր.

6. Նախադասութեան մէջ այն երկրորդական առարկաները (լրացուցիչները), որոնք ենթակայի գործողութիւնը իրանց վերայ են կրում, են հայցական հոլովի խնդիրներ. Ես դասու գրեցի. նա գիրքը կարդաց. դասու, գիրքը — հայցական են :
7. Մի քանի բայեր կան, որոնք թէւ ներգործական են և գլխաւորից գործողութիւնը տանում են դէպի երկրորդականը և պիտի հայցական հոլով պահանջէին, բայց պահանջում են հայցականի փոխարէն տրական հոլով : Ես խփեցի ֆայտին. մենք լաղթեցինք, տիրեցինք երկրն. այդպէս աղաչել, խնդրել, օգնել, նայել բայերը ևլ :
8. Հայցական են դրւում տրականի նման այն մարդիկների անունները, գերանունները, որոնք արդէն որոշեալ են : Ես ՚որո՞ն տեսայ: Ես Պետրոսին տեսայ :
9. Ուղղութիւն ցոյց տուող բայերը պահանջում են հայցական հոլով. Ես գնացի դրւուն. մենք հասանք առահետքարտն :
10. Երբ խնդիրը — անորոշ է, անորոշ հայցական է կոչւում, երբ որոշեալ է — որոշեալ հայցական է կոչւում. Ես Տարու տեսալ, Ես Էրն տեսալ, Ես Տարուն տեսայ, Ես Հանը տեսայ :
